ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1963 Общественные науки

Շ. Ռ. Հարությունյան

ԱՌՎԵՏԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սովետական իշխանությունը հզոր թափով խթանեց հայ ժողովրդի նյութական և հոգևոր ուժերի անսահմանափակ զարգացումը, լավագույն պայմաններ ստեղծեց գիտության, այդ թվում պատմական գիտության զարգացման համար։

1921 թ. հունվարին տեղի ունեցավ Երևանի համալսարանի բացումը, որը հայ ժողովրդի կյանքում կուլտուրական մեծ իրադարձություն էր։ Իր հիմնադրման օրից սկսած համալսարանը ոչ միայն դարձավ բարձրագույն կադրերի, այդ թվում պատմաբանների պատրաստման գանձարան, այլև գիտական մտքի խոշոր կենտրոն, որից Ա. Մյասնիկյանի պատկերավոր արտահայտությամբ «կենսատու ճառագայթներ են ցրվում դեպի երկրի բոլոր ծայրերը»։

1921 թ. փետրվարին ՀՍՍՌ Ռևկոմի դեկրետով էջմիածնի մատենադարանի և թանգարանի բազայի վրա հիմնվում է Հայաստանի կուլտուր-պատմական ինստիտուտը, կամ ինչպես նա 1921 թ. մայիսից վերանվանվեց՝ Հայաստանի գիտական ինստիտուտը, որը առաջին գիտահետազոտական հիմնարկն էր Սովետական Հայաստանում։ «Էջմիածնի Կուլտուրա-պատմական ինստիտուտը,— ասված է Ռևկոմի նախագահ Ս. Կասյանի և լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանի ստորագրությամբ հրապարակված դեկրետում,— նպատակ պետք է ունենա գիտական հիմքերի վրա դնել Հայաստանի ժողովրդական կուլտուրաների ուսումնասիրության գործը և միաժամանակ մասսաների սեփականություն դարձնել հնության այն բոլոր հիշատակարանները, որոնք գիտական ու գեղարվեստական նշանակություն ունեն և կարող են ազդյուր դառնալ կուլտուրական նոր արժեքների ստեղծագործության»[1]։ Նորաստեղծ ինստիտուտը 1921—1922 թթ. հրատարակում է հայագիտական մի շարք աշխատություններ, «Բաներ» գիտական աշխատությունների ժողովածուն և ձեռնամուխ է լինում ձեռագրական ֆոնդը հարստացնելու գործին։ Այդ տարիներին էջմիածնի ինստիտուտում գիտահետազոտական աշխատանքներ էին կատարում Աշոտ Հովհաննիսյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը, Ե. Սամվելյանը, Ռ. Հովսեփյանը, Ռ. Թորամանյանը, Ե. Տեր-Մինասյանը, Ռ. Զուրաբյանը և ուրիշներ։

1921 թ. հունիսին ՀՍՍՌ ժողկոմսովետի դեկրետով հիմնվում է Հայաստանի ազգագրական թանգարանը։ «Հայաստանի հեղափոխական շարժումների ուսումնասիրության գործը գիտական հիմքերի վրա դնելու,— ասված է ՀՍՍՌ ժողկոմսովետի նախագահ Ա. Մյասնիկյանի և լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանի ստորագրություններով հրապարակված դեկրետում,— այլև հեղափոխական շարժումների հիշատակարանները կորուստից փրկելու և մասսաների հեղափոխական դաստիարակության միջոց դարձնելու համար Լուսավորության

---

1 «ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 1, Էջմիածին, 1921, էջ 108։

ժողովրդական կոմիսարիատին կից հիմնել Հայաստանի հեղափոխության հնադարան» («ՀՍՍՌ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 2, էջ 57)։

1922 թ. նոյեմբերին Երևանում բացվում է պետական թանգարանը՝ հնադիտական, ազգագրական, պատմական, գեղարվեստական, ռևոլյուցիոն և արխիվային բաժիններով։ 1923 թ. հիմնադրվեց Կուսպատը՝ Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության նորաստեղծ ինստիտուտը, որը լայն աշխատանք ծավալեց Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների և մասնավորապես կոմունիստական պարտիայի պատմության գիտական ուսումնասիրության ուղղությամբ։

Հայաստանի գիտական ինստիտուտը, որը 1925 թվականի ապրիլին վերանվանվեց ՀՍՍՌ Գիտության և արվեստի ինստիտուտի, 1930 թ. վերակազմվում է որպես Գիտությունների ինստիտուտ։ Գիտության և արվեստի ինստիտուտը ուներ պատմական-հասարակագիտական բաժին, որի անդամներ էին հաստատված Հ. Մանանդյանը (բաժնի գիտական քարտուղար), Լեոն, Հ. Գյուլի-Քեխվյանը, Մ. Արեղյանը, Հ. Աճառյանը, Հ. Ադոնցյանը, Ե. Լալայանը, Ա. Քալանթարը, Ա. Խաչատրյանը, Ա. Կարինյանը, Աշ. Հովհաննիսյանը, Գր. Ղափանցյանը, Ա. Տերտերյանը և ուրիշներ։ 1926 թ. նոր անդամներ են ընտրվում Թ. Ավդալբեգյանը, Դ. Անանունը, Ե. Շահազիզը, թղթակից-անդամներ՝ պրոֆ. Լ. Մսերյանցը (Մոսկվա), Հ. Զորյանը։

ՀՍՍՌ Գիտության և արվեստի ինստիտուտն իր գոյության հինգ տարիների ընթացքում բեղմնավոր աշխատանք կատարեց նաև սովետահայ պատմագրության զարգացման բնագավառում։ Այդ տարիներին ինստիտուտի պատմա-հասարակագիտական բաժնի անդամները մշակում էին գիտահետազոտական մի շարք կարևոր թեմաներ։ Իրենց կատարած գիտական աշխատանքի մասին նրանք ինստիտուտի և բաժնի ժողովներում սիստեմատիկաբար հանդես էին գալիս զեկուցումներով, որոնցից մի բանիսը հրատարակվել են ինստիտուտի գիտական «Տեղեկագրում»։

Այսպիսով կոմունիստական պարտիայի և սովետական կառավարության՝ գիտության զարգացման նկատմամբ ցուցաբերած հոգատարության շնորհիվ 1920-ական թվականներին Հայաստանում ստեղծվեց հայ ժողովրդի պատմությունն ու կուլտուրան ուսումնասիրող գիտահետազոտական հիմնարկների մեծ ցանց, ուր գիտահետազոտական լայն աշխատանք էին կատարում մեծ թվով պատմաբաններ, հնագետներ և բանասերներ։

Սովետական իշխանության առաջին տարիներից սկսեց հրատարակվել պատմագիտական գրականություն, մի շարք գիտական ամսագրեր, տեղեկագրեր ու ժողովածուներ[2], որոնց մեջ սիստեմատիկաբար հրապարակվում էին հայ ժողովրդի պատմության առանձին հարցերին նվիրված արժեքավոր ուսումնասիրություններ ու վավերագրեր։

Սովետական իշխանության գոյության առաջին տասնամյակում զգալի տեղաշարժ կատարվեց սովետահայ պատմագիտության մեջ, որի զարգացմանը սկսել էր ձևնամուխ լինել նաև Հայաստանի պատմաբանների նոր, երի-

---

2 «Նորք», 1922—1927։ «Նոր աշխարհ», 1922։ ՀՍՍՀ Երևանի պետական համալսարանի «Տեղեկագիր», 1925—1930 (1930 թվականից հետո լույս է տեսնում «Գիտական աշխատությունների ժողովածու» անունով)։ ՀՍՍՀ Գիտության և արվեստի ինստիտուտի «Տեղեկագիր» 1926—1931։ «Լենինյան ուղի», 1928—1934։ «Նոր ուղի», 1929—1932 և այլն։

տասարդ սերունդը։ Պատմաբանների և բանասերների ավագ սերնդի առաջավոր ներկայացուցիչները Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հետևանքով կատարված իրադարձություններից հետո դպատիարաբանական դպրի շրջադարձ կատարելով փորձեցին մոտենալ պատմության մատերիալիստական ըմբռնմանը, ջանալով հայոց պատմությունը շարադրել նոր, մատերիալիստական մեթոդոլոգիայով, սակայն այդ նրանց քիչ էր հաջողվում։

Սովետահայ պատմագրության մեջ հետագետ տիրապետող դիրքեր են գրավում մարքսիստ-պատմաբանները, որոնց մի մասի հայացքները ձևավորվել էին դեռևս սովետական կարգեր հաստատվելուց առաջ։ Սովետահայ մարքսիստական պատմագրության հետագա զարգացման գործում մեծ դեր խաղաց մարքսիստ-պատմաբանների առաջին համագումարը, որը տեղի ունեցավ 1928 թ. դեկտեմբերին Մոսկվայում։ 1930 թ. Երևանում ստեղծվեց մարքսիստ-պատմաբանների համամիութենական ընկերության հայկական բաժանմունք, որի վարչության մեջ մտնում էին Հ. Զորյանը, Արդար Հովհաննիսյանը և Կ. Ղազարյանը։

Սովետահայ պատմագրությունը գարգանում էր որպես ամբողջ սովետական պատմագրության մի բաղկացուցիչ մասը, ուստի և նա իր վրա կրում էր ոչ միայն վերջինիս դրական ազդեցությունը, այլև որոշ դեպքերում պարունակում էր մեծ սխալներ, որոնք դրսևորվում էին նրա մեջ։

Սովետական Հայաստանի պատմաբանների առջև կանգնած էր անցյալի պատմական հարուստ ժառանգության քննադատական վերամշակման բարդ, բայց միաժամանակ կարևոր խնդիրը։ Հարկավոր էր ոչ թե հախուռն կերպով մերժել, այլ վերստուգել այն ամենը, ինչ ասել էին հայագետների նախորդ սերունդները։ Սովետահայ պատմագրության առաջնահերթ խնդիրը դարձավ հատկապես դասակարգային պայքարի ու ռևոլյուցիոն շարժումների պատմության գիտական ուսումնասիրությունը։

Այդ տարիներին Սովետական Հայաստանում ևս տեղի էր ունենում սուր պայքար բուրժուական ամեն տեսակ գաղափարախոսության, առաջին հերթին դաշնակցության գաղափարախոսության դեմ։ Մարքսիստ-պատմաբանները պայքարում էին հայ կղերա-ֆեոդալական և բուրժուա-նացիոնալիստական պատմագրության կոնցեպցիաների դեմ, ճանապարհ հարթում սովետական պատմական գիտության գարգացման համար։ Հայտնի է, որ հայ բուրժուա-նացիոնալիստական պատմագրությունը հայ ժողովրդի պատմությունը պատկերում էր որպես մի միասնական հոսանք, ժխտելով դասակարգային հակամարտ ուժերի առկայությունը և նրանց միջև գոյություն ունեցած դասակարգային պայքարը։

Սովետահայ պատմագիտության գարգացման հիմքում դրվեցին մարքսիզմ-լենինիզմի կլասիկների երկերը, որոնք Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո թարգմանվում և մասսայարար հրատարակվում են հայերեն։ Մարքսի-Էնգելսի-Լենինի անմահ աշխատությունները հզոր ջահի պես լուսավորում են ինչպես բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի պատմական գարգացման ուղին։ Այդ աշխատությունները, նրանց մեթոդոլոգիական դրույթները սովետահայ պատմաբանների համար ևս լուսատու ուղեցույց են դառնում ճշմարտացի և գիտականորեն շարադրելու հայ ժողովրդի բազմադարյան պատմությունը՝ հնագույն ժամանակաշրջանից մինչև մեր օրերը։

* * *

Հին և միջնադարյան Հայաստանի պատմության գիտական հետազոտման գործում աչքի ընկնող դեր է կատարել ակադեմիկոս Հ. Մանանդյանը։ Իր գիտական գործունեությունը սկսելով դեռևս 19-րդ դարի վերջին, Հ. Մանանդյանը, ինչպես հին սերնդի բազմաթիվ այլ հայագետ-պատմաբանները, միայն սովետական շրջանում կարողացավ դրսևորել իր փայլուն ընդունակությունները հայագիտության, մասնավորապես պատմագիտության բնագավառում։ Լինելով Երևանի համալսարանի առաջին ռեկտորը, իսկ մի շարք տարիներ նաև պատմագրական ֆակուլտետի դեկանն ու Հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչը, Հ. Մանանդյանը մեծ դեր է խաղացել նաև Հայաստանում պատմաբանների կադրեր պատրաստելու գործում։

Հ. Մանանդյանը սովետական իշխանության տարիներին դարձավ սովետական պատմագիտության ավագ սերնդի ականավոր դեմքերից մեկը։ Ունենալով անընդհատ որոնող և խորաթափանց միտք, լավատեղյակ լինելով հայկական, ռուսական և ընդհանուր պատմության, մանավանդ անտիկ աշխարհի պատմության սկզբնաղբյուրներին, հանդես բերելով պատմա-բանասիրական ու աղբյուրագիտական բարձր էրուդիցիա ակադեմիկոս Հ. Մանանդյանը իր բարձրարժեք աշխատություններով հարստացրեց սովետական պատմագրությունը, մեծ ծառայություններ մատուցեց սովետական պատմական գիտության զարգացմանը։

1920-ական թվականներից սկսած հրատարակվում են Հ. Մանանդյանի մի շարք աշխատությունները, որոնց մեծագույն մասը նվիրված է հին և միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրությանը։ Հ. Մանանդյանը սովետահայ առաջին գիտնականն էր, որը, չնայած հայ պատմիչների տված կցկտուր տեղեկություններին, իր հմտալից աշխատություններով կարողացավ վեր հանել շինական դասի սոցիալական և իրավական վիճակը, ուրվագծել միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական պատկերը։ Այդ պրոբլեմին է նվիրված նրա «Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում» աշխատությունը, որը լույս է տեսել 1925 թվականին[1]։

1926 թ. լույս է տեսնում Հ. Մանանդյանի «Հայաստանի արտունի հարկերը մարզպանության շրջանում» աշխատությունը, որի մեջ քննության է առնվում 5—7-րդ դարերի Հայաստանի հարկային սիստեմը։ 1927—1928 թթ. երկու պրակով հրատարակվում է «Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության» խորագրով հետազոտությունը, որի մեջ տրվում է հայ մատենագրության և արձանագրությունների մեջ եղած սոցիալական ու տնտեսական տերմինների բանասիրական վերլուծությունը։ Սակայն պետք է նշել, որ

[1] Հ. Մանանդյանի մի շարք տեսակետները իր ժամանակին քննադատության են ենթարկվել պրոֆ. Ն. Ադոնցի կողմից։ «Հայ հին շինականությունը» խորագիրը կրող գրախոսական հոդվածում Ն. Ադոնցը պատմա-բանասիրական դիտողություններ է կատարում Հ. Մանանդյանի «Դիտողություններ Հին Հայաստանի շինականների դրության մասին» աշխատության վերաբերյալ։ Նա չի ընդունում Հ. Մանանդյանի այն տեսակետը, թե հին Հայաստանում՝ Արշակունյաց շրջանում և նրանից հետո համայնական հողատիրություն է եղել Հայաստանի երկու խոշոր հարևան երկրներում՝ իրանական արևելքը և բյուզանդական արևմուտքը հետ, որոնց ազդեցության տակ կերտված է հայ կյանքը, գրում է Ն. Ադոնցը, նույնպես ծանոթ չեն եղել համայնական հողատիրություններ։ Տե՛ս Ն. Ա դ ո ն ց, Պատմական հետազոտություններ, Փարիզ, 1948, էջ 157—205։

ֆեոդալիզմի պատմությանը նվիրված Հ. Մանանդյանի աշխատություններում բավարար չափով չի բացահայտված շինական դասի մեջ գոյություն ունեցող շերտավորումը և չի վերհանված ֆեոդալիզմի դեմ հայ գյուղացիության մղած պայքարը։

Վերոհիշյալ աշխատություններից բացի, ձեռագրի իրավունքով հրատարակվում են Երևանի համալսարանում Հ. Մանանդյանի կարդացած դասախոսությունները[4]։ Հ. Մանանդյանի այդ գիրքը, որ առաջինն է սովետական իշխանության տարիներին հրատարակված նրա աշխատությունների մեջ, իր վրա կրում էր բուրժուական պատմագրության որոշակի ազդեցությունը։ Հեղինակը պատմական երևույթները բացատրելիս առաջ է քաշում ռասայական և կրոնական ազդակների դերը[5]։ Թեև հեղինակն այդ աշխատության մեջ զգալի տեղ է հատկացրել սոցիալ-տնտեսական հարաբերությունների լուսաբանմանը, սակայն տուրք է տվել նաև տնտեսական մատերիալիզմի տեսությանը։

Հ. Մանանդյանի շատ աշխատություններ հրատարակվեցին հետագա տասնամյակներում, որոնք մեծ ավանդ հանդիսացան սովետահայ պատմագրության մեջ։ Մեծանուն գիտնականի պատմագիտական ամբողջ գործունեության ամենախոշոր ծառայությունն այն է, որ նա վարպետորեն վերանայեց և պատմա-քննական բովից անցկացրեց անտիկ և միջնադարյան հեղինակներից մեզ հասած բոլոր տեղեկությունները Հայաստանի մասին։ Քննադատական մոտեցում հանդես բերելով պատմական աղբյուրների և պատմական գրականության նկատմամբ, ակադեմիկոս Մանանդյանը հին և միջնադարյան Հայաստանի պատմության բազմաթիվ փաստեր շարադրեց նոր լուսաբանությամբ։ Ավելորդ չէ հիշատակել, որ Մանանդյանի գրեթե բոլոր աշխատությունների նշանակությունը դուրս է գալիս ազգային պատմության շրջանակներից։ Նրանք մեծ արժեք են ներկայացնում ինչպես անտիկ աշխարհի, այնպես էլ Արևելքի ու մասնավորապես Անդրկովկասի ժողովուրդների հին և միջնադարյան պատմության ուսումնասիրման համար։

Ֆեոդալական Հայաստանի սոցիալ-դասակարգային հարաբերությունների լուսաբանման ուղղությամբ 1920-ական թվականներին զգալի աշխատանք է կատարել պրոֆ. Հ. Զորյանը։ 1927—28 թթ. լույս տեսան նրա «Արաբների հարկային քաղաքականությունը Հայաստանում»[6] և «Արաբական շրջանում ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակադրությունը»[7] աշխատությունները։ Վերջին աշխատության մեջ հեղինակը վեր է հանել արաբական տիրապետության և բագրատունիների ժամանակաշրջանի ֆեոդալական Հայաստանի արտադրական հարաբերություններում առաջացած որակական փոփոխությունները, գյուղացիության շահագործման սաստկացումը, ինչպես և նրանց տնտեսությունների քայքայման պրոցեսը։ Առանձնապես արժեքավոր է Հ. Զորյանի՝ միջնադարյան Հայաստանի գյուղացիական շարժումներին նվիրված աշխատությունը[8]։

---

4 Հ. Մանանդյան, Հայաստանի պատմությունը Թուրք-Թաթարական արշավանքների շրջանում, Երևան, 1922։

5 Տե՛ս նշված աշխատության ներածությունը, էջ 41—42 և այլն։

6 Երևանի պետական համալսարանի գիտական «Տեղեկագիր», № 2—3, 1927։

7 ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի «Տեղեկագիր», № 2, 3, 1927—1928։

8 Հ. Զորյան, Ֆեոդալական Հայաստանի գյուղացիության շարժումները 10-րդ դարում, Երևան, 1929 (առանձնատիպ՝ Երևանի պետական համալսարանի «Տեղեկագիր» № 4)։

Պատմական հետազոտություններից բացի Հ. Զորյանն ունի նաև մի շարք աշխատություններ՝ նվիրված հայ պատմագրության հարցերին։ 1928 թ. մասնակցելով Մոսկվայում տեղի ունեցած մարքսիստ-պատմաբանների համամիութենական առաջին համագումարին, նա ՍՍՌՄ ժողովուրդների պատմության սեկցիայում զեկուցում է կարդացել «Հայկական պատմագրության արդի վիճակը» թեմայով, որի մեջ առաջ է քաշել սովետահայ պատմագրության առջև կանգնած հիմնական խնդիրները[9]։ Դժբախտաբար, նա ելնելով գռեհիկ սոցիոլոգիզմի դիրքերից, սուբյեկտիվ, ոչ-ճիշտ մոտեցում է հանդես բերել մի շարք ականավոր պատմաբանների (Լեո, Մանանդյան) գնահատման հարցում։

Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի առանձին հարցեր հատուկ ուսումնասիրության են ենթարկվել Ռ. Ավդալբեգյանի կողմից։ 1920-ական թվականներին գրած նրա մի շարք աշխատությունները մեծ չափով նպաստեցին Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների լուսաբանմանը[9ա]։

1920-ական թվականներին հրատարակվեցին պրոֆ. Ա. Խաչատրյանի մի շարք կարևոր աշխատությունները հայկական լեռնաշխարհի նախարնիկների մասին[10]։ Ուշադրության արժանի է նաև 1925 թ. հրատարակված տեղագրական ուսումնասիրությունը[11], թեև այն խստորեն քննադատվել է պրոֆ. Ն. Ադոնցի կողմից[12]։

Առաջին տասնամյակի հնագիտության և ազգագրության զարգացման գործում նշանակալից ավանդ ունեն Հ. Օրբելին, Ա. Քալանթարը, Թ. Թորամանյանը, Ս. Տեր-Ավետիսյանը, Խ. Սամվելյանը, Ե. Լալայանը, Ստ. Լիսիցյանը և ուրիշներ, որոնց գործերի քննությանը սույն հոդվածում չենք անդրադառնում։

Հայոց պատմության, հնագիտության, ազգագրության և կուլտուրայի առանձին հարցերի շուրջը պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը գրել է մի շարք աշխատություններ, որոնց մեծ մասը հրապարակվել է Կովկասի պատմա-հնագիտական ինստիտուտի գիտական տեղեկագրում։

1920-ական թվականների սովետահայ պատմագրության աչքի ընկնող դեմքերից էր պրոֆ. Լեոն (Առաքել Բաբախանյանը), որը հայ անցյալ պատմագրության ականավոր ներկայացուցիչներից մեկն է եղել։ Լեոն գիտական գործունեության շատ երկարատև ուղի է անցել։ Զափաղանց բեղմնավոր է

---

9 Հ. Զ ո ր յ ա ն, Մարքսիստ-պատմաբանների առաջին համագումարը, «Նոր ուղի», № 2—3, 1929։

9ա Տե՛ս Ռ. Ա վ դ ա լ բ ե գ յ ա ն, Բահրան և մյուլքը 17 և 18-րդ դարերում, «Նորք», № 2, 1923։ Երկրագործական հավելյալ արդյունքների նորման 17-րդ և 18-րդ դարերում ու 19-րդ դարի սկզբներին, նույն տեղում, № 3։ Հաս, Սակ ու Բաժ, ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի «Տեղեկագիր», № 1, 1926։ Հայ շինականի ու գեղջկուհու աշխատավարձը 5-րդ դարում, նույն տեղում, № 3, 1928։ Մի գաղտնիք հայ վիմական արձանագրությունների մեջ ու նրա նշանակությունը Հայաստանի տնտեսական զարգացման պատմության համար, Երևան, 1927։ Երկու էջ Հայաստանի ոռոգման պատմությունից, ու նրանց գործնական հետևանքները, Երևան, 1927։

10 Ա. Խ ա չ ա տ ր յ ա ն, Միտանի-Խուրրի ժողովուրդը, նրա հայրենիքը և պատմական հնությունը, Երևան, 1926։ Արիական խավը նախաուրարտյան Հայաստանում, ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի «Տեղեկագիր», № 4, 1929։

11 Ա. Խ ա չ ա տ ր յ ա ն, Հույն պատմիչների վկայությունը Հին Հայաստանի ոռկի հանքերի ու նրանց տեղի մասին։ ՀՍԽՀ պետական համալսարանի «Տեղեկագիր», № 1, 1925։

12 Ն. Ա գ ո ն ց, Պատմական հետազոտություններ, էջ 206—222։

եղել նրա դրիչը։ Մ. Չամչյանից հետո նա առաջին պատմաբանն է, որ իր «Հայոց պատմություն» եռահատոր աշխատության մեջ սիստեմատիկ կերպով շարադրել է հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 18-րդ դարի վերջը, բացառությամբ 12—15-րդ դարերի։ Լեոյի աշխատությունները, որոնք լայն տարածում են ստացել հայ ընթերցողների մեջ, պարունակում են հարուստ փաստական նյութեր և աչքի են ընկնում ոճի ինքնատիպությամբ, պատկերավորությամբ ու շարադրանքի մատչելիությամբ։ Շարադրանքի մատչելիության տեսակետից հայ պատմագրության մեջ ոչ ոք չի գերազանցում Լեոյին։

Սովետահայ պատմաբաններից Լեոն առաջինն էր, որ ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի նոր պատմության սիստեմատիկ շարադրմանը։ 1920-ական թվականներին բազմավաստակ պատմաբանը դրեց մի շարք նոր աշխատություններ։ 1925 թ. հրատարակվեց Լեոյի «Անցյալից» հուշերի գիրքը[13], որի մեջ հեղինակը պատմաքննական բովից անց է կացնում 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 1920-ական թվականների սկիզբը ընկած ժամանակաշրջանում հայ ժողովրդի պատմության մեջ կատարված բազմաթիվ իրադարձություններ։ Լեոյի գիրքը հատկապես աչքի է ընկնում անցյալում թույլ տրված լուրջ սխալների անողոք քննադատությամբ, բազմաթիվ դեպքերի խորը վերլուծությամբ։ Հեղինակը փաստական նյութերի հիման վրա մերկացնում է ինչպես հայ բուրժուա-ազգայնական պարտիաների գործունեությունը, այնպես էլ մեծ տերությունների դիվանագիտական խաղերը։ Նա կրքոտ կերպով պատկերում է բուրժուական արևմուտքի իսկական դեմքը հայ ժողովրդի նկատմամբ, և հայ ազգայնական կուսակցությունների՝ նրա հետ կապված խարուսիկ ակնկալությունների տխուր հետևանքները։

1926—1927 թվականներին լույս տեսավ Լեոյի «Հայոց պատմություն», երկու մասից բաղկացած աշխատությունը[14], որը 1924—1926 ուսումնական տարիներին Երևանի համալսարանում նրա կարդացած դասախոսություններն էին։ Այդ աշխատությունը պարունակում է փաստական հարուստ նյութ և երկար ժամանակ ծառայել է որպես հայ ժողովրդի պատմության բուհական ձեռնարկ։

1920-ական թվականներին Լեոյի գրած և հետմահու հրատարակված աշխատություններից են «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը»[15] և «Խոջայական կապիտալը»[16]։ Առաջին աշխատության մեջ հեղինակը քննական վերլուծման է ենթարկում հայկական հարցի պատմությունը և վեր հանում հայ հասարակական-քաղաքական հոսանքների ու պարտիաների գործունեությունը սկսած անցյալ դարի 60-ական թվականներից մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը։ Հեղինակը արևմտահայերի ազատագրական գաղափարախոսությունը, ինչպես ինքն է անվանում թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, համարում է հայ ժո-

---

13 Լեո, Անցյալից։ Հուշեր, թղթեր, դատումներ, Թիֆլիս, 1925։

14 Լեո, Հայոց պատմություն։ Նորագույն շրջան։ Հեղինակի իրավունքով, ապակենտրոնացման առաջին և երկրորդ, Երևան, 1926—1927։

15 Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հատ. Ա, Փարիզ, 1934, հատ. Բ, Փարիզ, 1935։

16 Լեո, Խոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, հատ. Ա, Երևան, 1934։

դովրդի ապրած մեծագույն ողբերգություններից ամենասոսկալին։ «Սկիզբ առնելով 19-րդ դարի 60-ական թվականներին,—գրում է Լեոն աշխատության առաջաբանում,—այս ապստամբական փոթորկալից շարժումը վերջնական «լուծման» հանգեց, ինչպես հայտնի է, 1914—1918 թվականների համաշխարհային իմպերիալիստական պատերազմի ընթացքում, ամբողջ թուրքահայ ժողովրդի բնաջնջմամբ, թուրքաց Հայաստանի ամբողջ մակերեսից իսպառ անհետացմամբ»։ Աշխատության մեջ անխնա քննադատության են ենթարկվում Արևմտյան Եվրոպայի, ցարական Ռուսաստանի և Թուրքիայի պետական ղեկավար գործիչները, հայ բուրժուա-նացիոնալիստական պարտիաները։

«Խոջայական կապիտալը» հիմնականում նվիրված է 17—18-րդ դարերի հայ ազատագրական շարժումներին, որոնք հեղինակի կարծիքով պատրանքներ են եղել։ Աշխատության վերնագիրը ցույց է տալիս, որ հեղինակը հայ ազատագրական շարժման առաջմղիչ ուժը համարում է առևտրական, իսկ պես ինքն է անվանում՝ խոջայական կապիտալը։

Լեոյի գրչին են պատկանում նաև 1922 թ. «Նորք» ամսագրում հրատարակված «Կոմունիզմը հայոց պատմության մեջ» և Երևանի պետական համալսարանի «Տեղեկագրում» 1927 թ. հրատարակած «Հայոց պատմության հարցերից» հոդվածները։ Վերջին հոդվածում Լեոն փորձում է հայթահարել իր իդեալիստական պատմահայեցողությունը և առաջ քաշել հայոց պատմությունը մատերիալիստական մեթոդոլոգիայով շարադրելու հարցերը։ «Մենք ունենք թագավորների, իշխանների և հոգևորականների պատմություն,—գրում է Լեոն,—բայց դեռ չունենք հայ ժողովրդի հասարակադիտական պատմությունը, այնպիսի պատմություն, որի մեջ հանդես գար ինքը՝ ժողովուրդը ...ժամանակակից մատերիալիստական դիտության տեսակետից հայոց պատմություն դեռ գրված չէ։ Պետք է նրան գրել նորից, այլապես մենք կմնանք առանց պատմության»[17]։

Սակայն Լեոյին չի հաջողվում մոտենալ պատմության մատերիալիստական ըմբռնմանը։ Չկարողանալով լիովին թոթափել իր նախկին իդեալիստական բեռը, բազմաթիվ հարցերում նա հանդում է էկլեկտիզմին և թույլ տալիս մի շարք սխալներ։ Լուրջ սխալներ կան Լեոյի հատկապես «Խոջայական կապիտալ» և «Թուրքահայ հեղափոխության դատափարարանությունը» աշխատություններում։ Տուրք տալով սովետական պատմագրության մեջ մի պահ իշխած «առևտրական կապիտալիզմի» սխալ կոնցեպցիային, Լեոն փորձեց հայերի հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցած բոլոր երևույթները բացատրել առևտրական (խոջայական) կապիտալի դերով։ Նա 16—20-րդ դարերի հայոց պատմությունը համարում էր խոջայական կապիտալի պատմություն։ «Խոջայական կապիտալը,—գրում է Լեոն,—հանդիսանում է այնքան մեծ, այնքան ընդերակշռելի մի հասարակական ուժ, որ նրան է միայն վերապահվում իրենով լցնել հայոց պատմության ամբողջ նոր շրջանը»[18]։

Վերոհիշյալ աշխատություններում Լեոն իր նախկինում արտահայտած տեսակետներին տրամագծորեն հակառակ մոտեցում հանդես բերեց հայ ժողովրդի պատմության բազմաթիվ հարցերում։ «Խոջայական կապիտալ» աշխատության մեջ Լեոն բացասական վերաբերմունք է ցույց տալիս հինգերորդ

---

17 Երևանի պետական համալսարանի «Տեղեկագիր», N 3, էջ 398։

18 «Խոջայական կապիտալը», էջ 6

դարի հայ ազատագրական պատերազմների նկատմամբ։ Ժխտելով 451 թ. ապստամբության ժողովրդա-ազատագրական բնույթը, Լեոն այն համարում է կրոնական և նախարարական ու գտնում, որ այդ ապստամբությունը հայ ժողովրդի համար եղել է դժբախտություն և սխալ։ Նույն բացասական վերաբերմունքն է հանդես բերում հեղինակը արարական լծի դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարին[19]։

Հայ-ռուսական հարաբերությունների հարցը աչքի ընկնող տեղ է գրավում Լեոյի աշխատություններում։ Նախասովետական տարիներին հրատարակած իր աշխատություններում նա մշտապես պաշտպանել է այն ճիշտ տեսակետը, որ Հայաստանի միացումը Ռուսաստանին պատմական անհրաժեշտություն էր, առաջադիմական երևույթ։ «Հայերը միմիայն Ռուսաստանի վրա պետք է հույս դնեն»—գրում էր նա[20]։ Լեոն մեծ հիացմունքով էր խոսում 17—19-րդ դդ. հայ ազատագրական շարժման, հայ-ռուսական հարաբերությունների հաստատման ու ամրապնդման գործում աչքի ընկնող դեր կատարած Իսրայել Օրու, Դավիթ Բեկի, Հովսեփ Էմինի, Գ. Շահամիրյանի, Մ. Բագրատյանի, Ն. Աշտարակեցու, Խ. Արովյանի, Մ. Նալբանդյանի և մյուս գործիչների մասին։ Սակայն 1920-ական թվականներին գրած աշխատություններում Լեոն գտնում էր, որ ռուսական տիրապետությունը հայ ժողովրդի համար եղել է բացարձակ չարիք։ «Խոջայական կապիտալ» աշխատության մեջ Լեոն ամենաբացասական գույներով է տալիս Ի. Օրու բնութագիրը։ Հայ ազատագրական շարժման այդ ռահվիրային նա համարում է «սնապարծ», «ռոմանտիկ քաղաքագետ», «արկածախնդիր», «ռուսաց նվաճողական իմպերիալիզմին փարած հայ կղերական դիվանագիտության ծառա և գործիք»[21] և այլն։ Նման գնահատականներ է տալիս Լեոն նաև մյուս գործիչներին։ «Թուրքահայ հեղափոխության դաղափարաբանությունը» աշխատության մեջ նա դատապարտում է արևմտահայերի ազատագրական շարժումները թուրքական բռնակալության դեմ, համարելով դրանք սրբերգություն, իսկ նրա ոգեշնչողներին՝ արկածախնդիրներ, հայասպաններ։ Խիստ բացասական դիրքերից մոտենալով Մ. Նալբանդյանի գեկավարած ռևոլյուցիոն-դեմոկրատական շարժմանը, մեղադրելով նրան ռուս ռևոլյուցիոն նարոդնիկության դաղափարները հայ իրականության մեջ մտցնելու և Զեյթունում ապստամբություն պատրաստելու մեջ, Լեոն Մ. Նալբանդյանին անվանում է «բակունինյան անարխիստ», «բունտար», «իրականությանը միանգամայն խորթ և օտար», «ողորմելի դաղութարնակ հայ ինտելիգենտ» և այլն[22]։ Լեոյի այս դրույթները միանգամայն սխալ և անընդունելի են։

Լեոյի պատմական մեթոդոլոգիայի մեջ ցայտուն կերպով արտահայտված է մոդեռնիզացիան։ Մոդեռնիզատորները գտնում են, որ պատմությունը քաղաքականություն է՝ շուտ տված դեպի անցյալը։ Պատմական անցյալում եղած երևույթները նրանց մոտ ստանում են նոր որակ համապատասխան իրենց էպոխայի սոցիալ-քաղաքական հանգամանքների։ Թեև նրանք խոսում են հնավոր անցյալի մասին, բայց միշտ նկատի ունեն ներկան։ Նրանք պատմական իրադարձությունը վերցնում են ոչ այն կապակցությամբ, որի մեջ նրանք տեղի

---

19 Տե՛ս Լեո, Կոմունիզմը հայոց պատմության մեջ, «Նորք», 1922, № 1, էջ 144։

20 Լեո, Գրիգոր Արծրունի, հատ. 2, Թիֆլիս, 1903, էջ 426։

21 Լեո, Խոջայական կապիտալը, էջ 179, 193, 196, 198, 200, 210, 158 և այլ տեղերում։

22 Լեո, Թուրքահայ հեղափոխության դաղափարաբանությունը, հատ. II, էջ 14, 23։

են ունեցել, այլ նրանց վրա սուբյեկտիվորեն փոխադրում են այսօրվա բնութագրերը և գնահատականները։ Լեոն հաճախ է գործածում անցյալի վերաբերյալ այնպիսի դարձվածքներ, որոնք բնորոշ են պատմության մոդեռնիզատորների համար՝ «հին Հռոմի բուրժուազիա», «Կարթիի բուրժուազիա», «հռոմեական դիշատիչ իմպերիալիզմ», «Տիգրանի ժամանակ Հայաստանը գրաված էր ծաղկուն իմպերիալիզմի շրջանում»[24] և այլն։

Պատմության մոդեռնիզացիայի բնորոշ օրինակ է Լեոյի «Կոմունիզմը հայոց պատմության մեջ» հոդվածը[25]։

Չնայած վերոհիշյալին պրոֆ. Լեոն մեծ դեր է խաղացել հայ պատմական մտքի զարգացման մեջ։ Սովետահայ պատմագրությունը չի հրաժարվում բազմավաստակ պատմաբանի հարուստ ժառանգությունից, այլ քննադատաբար օգտագործում է այն։

Հայ պատմագրությունը անցյալում շատ է զբաղվել ազատագրական շարժումների, հատկապես հինգերորդ դարում պարսկական լծի դեմ մղված ազատագրական պատերազմների պատմությամբ։ Հայտնի է, որ կղերա-ֆեոդալական պատմաբանները, կատարելով հայ լուսավորչական եկեղեցու և իշխող դասակարգի սոցիալ-քաղաքական պատվերը, պարսկական դեսպոտիզմի դեմ հինգերորդ դարում հայ ժողովրդի մղած ազատագրական պատերազմները որակել են որպես զուտ կրոնական պատերազմներ։ Հայ ազատագրական շարժումների պատմությունը եղել է հայ բուրժուական պատմագրության ուշադրության արժանացած թեմաներից մեկը, սակայն նա ևս չբացահայտեց և չէր էլ կարող բացահայտել այդ շարժումների սոցիալ-քաղաքական էությունը, ճիշտ որոշել նրանց տեղը և դերը հայ ժողովրդի ազատագրական պայքարի մեջ։ Անտեսելով ժողովրդական մասսաների ակտիվ մասնակցությունը իրենց ազատագրման համար մղված պայքարին, բուրժուական պատմաբանները այդ պատերազմները որակել են որպես նախարարական պատերազմներ։

Այդ նույն տեսակետը ավելի կամ պակաս չափով կրկնվել է նաև սովետահայ պատմագրության մեջ, հատկապես, ինչպես մենք տեսանք, Լեոյի աշխատություններում։ Պետք է ասել, որ 1920-ական թվականներին ամբողջական ոչ մի աշխատություն չի հրապարակվել, որ նվիրված լիներ օտար լծի դեմ հայ ժողովրդի մղած պայքարի պատմությանը։ Այդ թեմայով աշխատություններ երևան են գալիս միայն 1940—1950-ական թվականներին և նրանից հետո։

18-րդ դարի սկզբից հայ ազատագրական շարժումները կապվում են Ռուսաստանի հետ, այդ ժամանակ էլ վերջնականապես ձևավորվում է հայերի ռուսական օրիենտացիան։ Նախասովետական պատմագրության մեջ այդ թեման ևս ուշադրության է արժանացել, սակայն այդ հարցում ևս գոյություն են ունեցել տարբեր կոնցեպցիաներ։ Տարբ տալով ռուս մեծապետական պատմագրության իշխող կոնցեպցիային, հայ պատմաբաններից շատերը աշխատել են գունազարդել հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը, ցարիզմի նվաճողական քաղաքականությունը ներկայացնել որպես ազատարար քաղաքականություն։ Դրան հակառակ, որոշ պատմաբաններ հայերի ռուսական օրիենտացիան անվերապահորեն բացարձակ չարիք են համարել։

23 Լ ե ո, Խոջայական կապիտալը, էջ 323, 16։

24 «ԲՀԷ», հատ. 3, էջ 366։

25 «Նորք», 1922, գիրք առաջին, էջ 133, 134 և ուրիշ տեղերում։

Սովետահայ պատմաբաններից այդ կարևոր պրոբլեմին առաջին անգամ ձեռնամուխ է եղել բազմավաստակ պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը, որը մեծ դեր է խաղացել ու խաղում է սովետահայ պատմագրության զարգացման մեջ։ Զինված մարքսիստական-լենինյան մեթոդոլոգիայով, նա պետական ու պարտիական դեկավար աշխատանքի հետ միասին լուրջ ուսումնասիրության է ենթարկել հայ ժողովրդի նոր և նորագույն պատմության բազմաթիվ հանգուցային հարցեր։

Աշոտ Հովհաննիսյանը հայերի ռուսական օրիենտացիայի, հայ ազատագրության դաշտարախոսության հարցը քննել է դեռևս 1914 թ. Մյունխենում Իսրայել Օրու մասին հրատարակած դիսերտացիոն աշխատության մեջ[26], ապա սովետահայ պատմագրության առաջնեկի՝ «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիր» գրքում[27]։

Այս գրքում հեղինակը հանգամանորեն քննում է Կ. Եգյանի «Сношения Петра Великого с армянским народом» գրքում զետեղված մի շարք փաստաթղթերի վավերականության հարցը և հանգում այն եզրակացության, որ դրանցից մի քանիսը որոշակի նպատակներով կեղծված են հայ ազատագրական շարժման գործիչների կողմից։

Ա. Հովհաննիսյանը փաստական նյութի հիման վրա մերժում է նաև վրաց գիտնական Ա. Ցագարելիի այն անհիմն ենթադրությունը, թե իբր Իսրայել Օրին կատարում էր շվեդական Կարլ 12-րդ թագավորի առաջադրանքը, այն է՝ Ռուսաստանին դուրս բերել Իրանի դեմ, դրանով իսկ Պյոտրի ուշադրությունը Բալթիկ ծովից դարձնել Կասպից ծովի վրա։

Աշխատության մեջ մարքսիստ պատմաբանը ցույց է տվել, որ ցարիզմի նկատմամբ տարբեր դասակարգեր սկզբունքային տարբեր դիրք են ունեցել, որ Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո ռուսական օրիենտացիան բոլորովին նոր բովանդակություն ստացավ։ Հեղինակը հատկապես ընդգծել է Հոկտեմբերյան ռևոլյուցիայի բախտորոշ դերը ժողովրդական մասսաների, այդ թվում հայ ժողովրդի պատմական կյանքում։ «Մեր օրերի ռուս օրիենտացիան ընթանում է մասսաների ազատագրման տիեզերական խոյանքի հունով։ Այդ օրիենտացիայի մեջ է դարբնվում այսօր նաև շղթայաթափ հայ բազմության հեղափոխական տարրերի օդակը»[28]։

Աշխատությանը կցված են 16 արժեքավոր փաստաթղթեր, որոնք հեղինակը ձեռք է բերել 1915—1916 թթ. Մոսկվայի Արտաքին գործոց նախարարության գրքավոր արխիվում։

Ունենալով խորաթափանց միտք, հետազոտական տաղանդ, Ա. Հովհաննիսյանը հետազայում գրած իր մի շարք նոր, արժեքավոր աշխատություններում ավելի խորը հետազոտեց առաջադրված պրոբլեմը, շտկելով իր նախնա-

---

[26] Aschot Johannissian. Israel Ori und die Armenische Befreiungsidee. Munchen, 1914.

[27] Ա. Հովհաննիսյան, Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը։ Պատմա-քննական ուսումնասիրություն, Էջմիածին, 1921։

[28] Նույն տեղում, էջ 68։

կան գործերում տեղ գտած առանձին անհաջող ձևակերպումները[29]։ Պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Ա. Հովհաննիսյանի աշխատությունը գրվել է այն պահին, երբ մարքսիստական պատմագրությունն իր ուժեղ կրակն առաջին հերթին ուղղել էր ռուսական ցարիզմի արտաքին քաղաքականության մերկացման կողմը, երբ սովետահայ պատմագրության մեջ տակավին չէր բացահայտվել Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման՝ պրոգրեսիվ նշանակությունը, մի բան, որ կատարվեց միայն տասնամյակներ հետո։

18-րդ դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման գաղափարախոսության մի քանի կարևոր հարցեր լուսաբանել է Ռ. Ավդալբեգյանը իր «Հայ ազատագրական շարժման երկու հոսանք 18-րդ դարի վերջում» և «Շահամիր Շահամիրյանը ու ինքնակամայոց ինքնավարությունը 18-րդ դարում» աշխատություններում[30]։

Պատմա-բանասիրական քննության ենթարկելով «Կերպ դաշնադրության ի մեջ երկուց ազգաց, հայոց և ռուսաց» ընդհանուր վերնագիրը կրող հայ-ռուս դաշնադրության երկու վավերագրերը, հեղինակը նախ՝ հայ պատմագրության մեջ առաջին անգամ հերքում է այն սխալ կարծիքը, թե երկրորդ վավերագիրը գրված է ոչ թե հայերի, այլ ռուսների կողմից և ապա ցույց տալիս, որ 18-րդ դարի հայ ազատագրական շարժման մեջ երկու հոսանք, երկու գաղափարախոսություն է եղել։

Եթե առաջին վավերագիրը, գրում է Ռ. Ավդալբեգյանը, արտահայտում էր հայ կալվածատիրական դասակարգի՝ հայ մելիքների, բարձր հոգևորականության և վաճառականության շահերը, այսինքն սոցիալական այն խավերի, որոնց գաղափարախոսներն էին Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը և իշխան Հովհաննես Լազարյանը, ապա երկրորդ վավերագիրը ծնունդ է ոչ թե միապետական Ռուսաստանի քաղաքական և դիվանագիտական գործիչների մտքի, այլ 18-րդ դարի վերջին տասնամյակների հայ հասարակության ձախակողմի՝ հուշակավոր Մադրասի խմբի, որի անդամներից էին դեմոկրատական գաղափարներով տոգորված Մ. Բաղրամյանը, Շ. Շահամիրյանը և ուրիշներ։ Ավդալբեգյանի վերոհիշյալ ուսումնասիրությունները մեծ արժեք ունեն հայ հասարակական մտքի պատմության գիտական ուսումնասիրության համար։ Այս տեսակետից ուշադրության արժանի է նաև հեղինակի «Իրանական մեծ հեղափոխությունը ու ժամանակակից հայերը» աշխատությունը[31]։

Միջազգային հարաբերությունների ֆոնի վրա հայ ժողովրդի բազմադարյան պատմության լուսաբանման փորձ է արել Բ. Բորյանը իր երկհատորանոց աշխատության մեջ[32]։ Աշխատության առաջին մասում հիմնականում շարա-

29 Հայ-ռուսական դարավոր հարաբերությունների և հայերի՝ ռուսական օրիենտացիայի ուկրնավարման հարցը փայլուն կերպով շարադրված է նրա «Հայերի ռուսական կողմնորոշման նախապատմությունից» աշխատության մեջ։ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես» N 1, 1958։

Այս տեսակետից սովետական պատմագրության մեջ խոշոր ավանդ է մեծանուն գրանկանի «Երվանդներ հայ ազատագրական մտքի պատմության» երկհատորանոց աշխատությունը, որը հրատարակվել է 1957—59 թվականներին։

30 «Նորք», գիրք առաջին, 1922, ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի «Տեղեկագիր», N 4, 1929։

31 «Նորք», գիրք 4, 1924։

32 Б. Борьян, Армения, международная дипломатия и СССР, ч. I, II, М.—Л., 1928, 1929.

դրվել է հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակաշրջանից մինչև Հոկտեմբերյան ռևոլյուցիան, իսկ երկրորդ մասում՝ հետհոկտեմբերյան ժամանակաշրջանի պատմությունը։ Աշխատության առանձին գլուխներ նվիրված են Հայաստանում ֆեոդալիզմի և ստրկատիրության հարցի քննությանը, հայ ազատագրական շարժումներին, հայ-ռուսական հարաբերություններին, լայն կերպով շարադրվել է հայկական հարցի պատմությունը՝ իր սկզբնավորման օրից մինչև 1920-ական թվականները։ Փաստական հարուստ նյութերի հիման վրա հեղինակը հաջող կերպով մերկացնում է արևմտյան տերությունների խարդախ դիվանագիտական խաղերը և թուրքական գավթիչների ագրեսիվ, նվաճողական քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ, ցույց է տվել, թե արևմտյան տերությունները ինչպես են շարաշահել հայերի ազգային-ազատագրական պայքարը իրենց իմպերիալիստական-նվաճողական նպատակների համար։ Հեղինակը մերկացրել է դաշնակցականների կառավարության հակաժողովրդական, հայրենադավ քաղաքականությունը, դաշնակ-դիվանագետներին բնութագրել որպես մեծ տերությունների հլու կամակատարների։ Աշխատության մեջ վեր է հանված Հոկտեմբերյան ռևոլյուցիայի փրկարար դերը հայ ժողովրդի պատմական կյանքում։ Հեղինակը ըստ ամենայնի վեր է հանել Սովետական Ռուսաստանի ռազմա-քաղաքական, դիվանագիտական, տնտեսական և կուլտուրական հսկայական օգնությունը հայ ժողովրդին, ցույց է տվել Անդրկովկասյան ֆեդերացիայի և ՍՍՌՄ-ի ստեղծման պատմական նշանակությունը սովետական բոլոր ժողովուրդների, այդ թվում հայ ժողովրդի համար։

Սակայն Բորյանի աշխատության մեջ կան լուրջ, սկզբունքային սխալներ, բազմաթիվ շիլ ու շփոթ մտքեր։ Պատահական չէ, որ այդ աշխատությունը ժամանակին խիստ քննադատվեց[33]։

Հեղինակը Հայաստանի աշխարհագրական պայմաններով է բացատրում սոցիալ-տնտեսական և քաղաքական այն մեծ փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել Հայաստանի պատմության մեջ։ Բորյանի պատմական մեթոդոլոգիայի մեջ բնորոշ է նաև մոդեռնիզացիան։ Այսպես, օրինակ, նրա կարծիքով հին աշխարհում կար «կապիտալիստների տիրապետություն», «հայկական բուրժուազիա», որ գոյություն է ունեցել «վրացական իմպերիալիզմ» և այլն։

Բ. Բորյանը սխալ է գնահատում հայ ազատագրական շարժումները։ Չի կարելի համաձայնվել նրա այն մտքի հետ, թե դաշնակցության գաղափարախոսության ակունքները սկսվում են 17—18-րդ դարերի հայ ազատագրական շարժումներից[34]։ Հեղինակի կարծիքով դաշնակցական գաղափարախոսության նախահայրերը եղել են ոչ միայն Ս. Նազարյանը, Գր. Արծրունին, այլև Իսրայել Օրին, Շ. Շահամիրյանը և ուրիշներ։

---

33 Տե՛ս Ակոպովի գրախոսությունը՝ «Ռ. Հ.» № 89—90, 1929։ Նույնի, Մարքսիզմի տասը մարքսիզմի ոգու դեմ, «Նոր ուղի», № 7—8, 1929։ Թ. Մանդալյան, Ազգայնական իդեոլոգիայի մի նոր արտահայտություն, «Լենինյան ուղի», № 11, 1929։ Գր. Զուրաբյան, Հեղափոխական կոմիտեի բոնապրավման քաղաքականությունը և փետրվարյան ստամբակության պատճառների խնդիրը, «Նոր ուղի», № 7—8, 1929։ Հ. Զորյանի գրախոսությունը՝ նույն տեղում № 5։ Տե՛ս նաև Բ. Բորյանի պատասխանը՝ «Նոր ուղի», № 7—8, 1929։

34 Б. Борьян, Армения, международная дипломатия и СССР, ч. II, стр. 393.

Բորյանի աշխատության մեջ լուրջ սկզբունքային սխալներ կան նաև 1920 թ. Մայիսյան ապստամբության և 1921 թ. բոլշևիկյան կոմիտեների պատմության շարադրանքի մեջ։ Հեղինակը միակողմանի, բացասական գույներով է նկարագրում Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների ղեկավար օրգանի՝ Արմենկոմի գործունեությունը։ Փոխանակ բացահայտելու հատկապես Մայիսյան ապստամբության ղեկավարման գործում Արմենկոմի սխալները ու թերությունները, հեղինակը անհիմն մեղադրանքներ է բարդում նրա վրա[35]։

Բորյանը բացասական գնահատական է տալիս նաև Ալեքսանդրապոլում կազմված Հայաստանի Ռևկոմի գործունեությանը։

Բորյանը ճիշտ դիրքերից չի մոտենում նաև 1921 թ. բոլշևիկյան կոմիտեների դրդապատճառների հարցին։ Նա դաշնակների փետրվարյան ավանտյուրան չի դիտում որպես իմպերիալիզմի ծրագրած միասնական հակասովետական պայքարի մի օղակ. անտեսում է կուլակների, խմբապետների, մաուզերիստների, հոգևորականության հակառևոլյուցիոն գործունեությունը, նրանց կատաղի պայքարը սովետական իշխանության դեմ, վրացական մենշևիկների, թուրքական գավթիչների խաղացած դերը այդ ավանտյուրայի կազմակերպման գործում[36]։

Բորյանը անհիմն քննադատության է ենթարկում Հայռևկոմի 1920 թ. նոյեմբերի 29-ի դեկլարացիան։ Նա միակողմանի է գնահատում նաև 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի նշանակությունը։

Լուրջ սխալներ է կատարում Բորյանը Ակոպովի քննադատության առթիվ գրած իր պատասխան-հոդվածում։ Նա չի ըմբռնում լենինյան այն դրույթը, որ իմպերիալիզմի էպոխայում ոչ բոլոր ազգային շարժումներն են պրոգրեսիվ, որ բոլշևիկները չէին պաշտպանում ազգային այն շարժումները, որոնք հրահրվում էին միջազգային իմպերիալիզմի, ռուսական ցարիզմի, կովկասահայ բուրժուազիայի ու նրա մարտական պարտիայի՝ դաշնակցության կողմից։ Այդ շարժումները շեղում էին Ռուսաստանի հայերի ուշադրությունը դասակարգային պայքարից, ցարիզմի դեմ Ռուսաստանի բոլոր ժողովուրդների մղած համընդհանուր պայքարից, թուլացնում ռևոլյուցիոն ուժերի միասնական ճակատը։

1920-ական թվականներին հրատարակվեցին հնագույն սոցիալ-դեմոկրատ (մենշևիկ) Ռ. Ղարաջյանի (Սա. Արկոմեդ) մի շարք աշխատությունները։ 1923 թ. հրատարակվեց նրա «Материалы по истории отпадения Закавказья от России» աշխատությունը, որի մեջ հեղինակը փաստական նյութերի հիման վրա ցույց է տվել, թե ինչպես Անդրկովկասի հակառևոլյուցիոն ուժերը վրացական մենշևիկների ղեկավարությամբ գործարքի մեջ մտան գերմանա-թուրքական գավթիչների հետ, և Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հզոր ալիքների դեմ պատնեշ կանգնեցնելու նպատակով 1918 թ. ապրիլին Անդրկովկասը անջատեցին Սովետական Ռուսաստանից։ Հեղինակը, սակայն, անբավարար է լու-

[35] Там же, стр. 98, 101, 102.
[36] Там же, стр. 135.

սարանել քննարկվող ժամանակաշրջանում դաշնակցական լիդերների բռնած հակառևոլյուցիոն դիրքը։

1927 թ. հրատարակվում է Գ. Ղարաջյանի «Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը Անդրկովկասում» գրքույկը, որը նվիրված է 1880-ական թվականներին Թիֆլիսում կազմակերպված հայ ազգային-դեմոկրատական խմբակի գործունեությանը։ Ուշադրության արժանի են գրքի առաջաբանում հեղինակի կողմից առաջ քաշված մտքերը պատմությունը ճշմարտացիորեն շարադրելու մասին։ «Պատմությունը պետք է գրել պատմական ստույգ փաստերի, և ոչ թե միայն հիշողությունների հիման վրա»—իրավացիորեն գրում է հեղինակը։ Սակայն Գ. Ղարաջյանի գրքում կան էական թերություններ, ոչ ճիշտ տեսակետներ։ Միանգամայն ճիշտ նշելով, որ անցյալում հայ պատմագրությանը բնավ չի հետաքրքրել վեր հանելու հայ ժողովրդական մասսաների ռևոլյուցիոն կյանքը, լուսաբանելու նրանց ընդհատակյա ռևոլյուցիոն գործունեությունը և ցույց տալու նրանց տեղը մեր հասարակական-քաղաքական մտքի զարգացման պատմության մեջ, հեղինակը, սակայն, ծայրահեղության մեջ ընկնելով, ժխտում է հայ անցյալ պատմագրության կատարած աշխատանքը, բոլոր պատմաբաններին համարում է տիրացուներ։ «Մեր կյանքը,—գրում է հեղինակը,—չի տվել, դժբախտաբար, պատմական դիտության զենքերով զինված գրիչներ» (էջ 5)։

Չի կարելի համաձայնվել հեղինակի այն նիհիլիստական տեսակետին, թե մեր ժողովուրդը չի տվել և չի տալիս մտքի տիտաններ, արտակարգ ընդունակություններով օժտված մեծ մարդիկ (էջ 44)։ Հեղինակը 1915 թ. հայկական կոտորածների համար մեղավոր է ճանաչում միայն դաշնակցությանը և չի բացահայտում թուրքական դահիճների և իմպերիալիստական տերությունների քաղաքականությունը։

Գ. Ղարաջյանի գրչին է պատկանում նաև 1910 թ. ժնևում Ռ. Պլեխանովի առաջաբանով ռուսերեն հրատարակված, 1923 թ. վերահրատարակված ու 1929 թ. հայերեն հրատարակված «Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում» աշխատությունը, որի մեջ շարադրված է Անդրկովկասում ծավալված բանվորական շարժումների և սոցիալ-դեմոկրատիայի պատմությունը իր սկզբնավորման շրջանից մինչև 1904 թ.։

Սովետահայ պատմագրության առաջին տասնամյակի նվաճումներից մեկը Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների պատմության ուսումնասիրման գծով կատարված աշխատանքն է։ Այդ տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ռ. Մելիք-Յոլչյանի «Չորս տարի Հայաստանի բանվորական շարժման պատմության»[37] վերտառությամբ աշխատությունը, որը սովետահայ պատմական գրականության մեջ առաջին փորձն է՝ նշված ժամանակաշրջանի բանվորական շարժման պատմության լուսաբանման բնագավառում։ Աշխատությունը գրված է հարուստ գրականության, ռևոլյուցիոն կոչերի, պարբերական մամուլի և արխիվային փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա։

Աշխատության առաջաբանում հեղինակը կանգ է առնում Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների պատմության ուսումնասիրության անհրաժեշտու-

37 Ռ. Մելիք-Յոլչյան, Չորս տարի Հայաստանի բանվորական շարժման պատմության, 1903--1907, Երևան, 1924։

թյան հարցի վրա։ «Մինչև այժմս էլ,—գրում է հեղինակը,—քաղաքական տարբեր տիպի համրակներ կամա, ակամա ձգտում են տարակուսանքի ենթարկել, կասկածի տակ առնել Հայաստանի բանվորության դասակարգային պայքարի շեշտն ու ընթացքը։ Մինչդեռ այդ նշանակում է անգիտանալ պատմությունը, խարդախել իսկությունը և չարամտորեն վարագուրել Հայաստանի տնտեսական զարգացման և հասարակական կյանքի շերտավորման շնորհիվ ծառացող հակադիր շահերի անխուսափելի բախումը»[38]։ Այդ պատճառով էլ «այսօրվա հրամայողական պահանջն է,—շարունակում է հեղինակը,—վերհիշել Հայաստանի բանվորա-գյուղացիական հեղափոխության նախասովետական ուղին, լուսաբանել նրան նպաստող ու խոչընդոտ քաղաքական խավերի դերն ու նպատակները, արձանագրել նրա հաղթության կամ պարտության էջերը,—որքան հնարավոր է կոնկրետ, կենդանի օրինակներով,—նամանավանդ, որ աշխատավորության աճող սերնդի առաջապահ ներկայացուցիչները պարտավոր են իմանալու, ճանաչելու երեկվա օրը, վերագնահատելու անցյալի քաղաքական փորձը, վերապրելու ժամանակի քաղաքական պայքարը»[39]։

Ելնելով մարքսիստական պատմագրության պահանջներից, հեղինակը նախքան բանվորական շարժումների կոնկրետ պատմությանն անցնելը աշխատության առաջին երեք գլուխներում հանգամանորեն ցույց է տվել երկրի սոցիալ-տնտեսական կյանքի պատկերը։ Այնուհետև նա պարզում է հայ-ադրբեջանական ընդհարումների քաղաքական բնույթը, հանգամանորեն քննում դաշնակցություն ու հնչակյան պարտիաների հակառևոլյուցիոն գործունեությունը կովկասահայ իրականության մեջ։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում աշխատության այն գլուխները, որտեղ հանգամանորեն լուսաբանվում է Հայաստանում սոցիալ-դեմոկրատիայի սկզբնավորման և բանվորական շարժումների ծավալման պատմությունը։

Սակայն Ե. Մելիք-Յոլչյանի աշխատության մեջ կան վիճելի, չհիմնավորված տեսակետներ, անհաջող ձևակերպումներ։ Աշխատության առաջին գլուխները ծանրաբեռնված են բազմաթիվ թվական տվյալներով, վիճակագրական աղյուսակներով, որոնք աշխատության այդ մասին տալիս են ավելի շատ տնտեսագիտական, քան պատմագիտական բնույթ։ Սխալ է հեղինակի մոտեցումը, երբ Հայաստանի բանվորական շարժման պատմությունը դիտել է որպես մի ինքնամփոփ երևույթ, այն չի շաղկապել Անդրկովկասի մյուս վայրերում ծավալված ռևոլյուցիոն շարժումների հետ։

Երիտասարդ կոմունիստ կեղծանվան տակ Ե. Մելիք-Յոլչյանի գրչին է պատկանում նաև «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիայի» տեղը հայ բանվորական շարժման պատմության մեջ» ընդարձակ դրախոսական-հոդվածը[40], որի մեջ հեղինակը խստորեն քննադատում է Ա. Խումարյանի «Հայ բանվոր հեղափոխական ասոցիացիա» հոդվածաշարքը[41]։ Հեղինակը գտնում է, որ Ա. Խումարյանը, որ Ասոցիացիայի ղեկավարներից մեկն է եղել, ճիշտ չի բնութագրել նրա իսկական ուղղությունը։ Նրա կարծիքով այդ կազմակերպությունը մարքսիստական, ռևոլյուցիոն չի եղել, հետևաբար նրա օրգան

---

38 Ե. Մելիք-Յոլչյան, Չորս տարի Հայաստանի բանվորական շարժման պատմության, էջ 3։

39 Նույն տեղում։

40 «Նորք», № 4, 1924։

41 «Մարտակոչ», Թիֆլիս, 1924, № 8—16։

«Ազատ Հայաստան» և ապա «Կռիվ» թերթերի հրատարակությունը չպետք է համարել հայ բանվորական մամուլի սկիզբը։

«Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիայի» մասին նույն կարծիքն է հայտնել նաև Գ. Ղարաջյանը, որը խստորեն քննադատել է պատմաբան Վ. Նեսկու 1924 թ. Լենինգրադում հրատարակված «Очерки истории РКП(б)» գրքի այն հատվածը, որը վերաբերում է Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատիայի սկզբնավորման շրջանին[42]։

Պետք է ասել, որ ոչ միայն 1920-ական թվականներին, այլև մինչև այժմ «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիայի» վերջնական ճիշտ գնահատականը չի տրված[43]։ Մեր կարծիքով ասոցիացիայի գնահատման հարցում առկա է որոշակի ծայրահեղություն։ Ճիշտ է, ասոցիացիայի անդամների հայացքներում մոլորություններ կան, սակայն չի կարելի ժխտել, որ այն իր ուրույն տեղն ունի հայ բանվորական շարժման պատմության մեջ։ Չի կարելի անցյալում գործած կազմակերպությունների և գործիչների գնահատականը տալ կտրելով նրանց ժամանակի կոնկրետ պայմաններից, յուրաքանչյուր դեպքում պետք է ունենալ պատմական մոտեցում։

1905 թ. ռևոլյուցիոն շարժումների պատմությանն է նվիրված հին բոլշևիկ, ականավոր հրապարակախոս, գրականագետ Ա. Կարինյանի «Հեղափոխական և ազգային շարժումներն Անդրկովկասում 1905-ին» աշխատությունը, որը հրատարակվել է 1927 թ. Մոսկվայում։ Հեղինակն իր աշխատության մեջ տալով Անդրկովկասի տնտեսական կյանքի ընդհանուր պատկերը, հատկապես կանգ է առել Վրաստանի գյուղացիական շարժումների և Բաքվի բանվորական գործադուլի վրա։ Հեղինակը Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժումները դիտում է համառուսաստանյան ռևոլյուցիայի հետ սերտ առնչության մեջ, ցույց է տալիս այդ շարժումների վրա ռուսական ռևոլյուցիայի ունեցած վիթխարի ազդեցությունը։ Աշխատության մեջ լայնորեն լուսաբանված է 1905—1906 թթ. հայ-ադրբեջանական ընդհարումների սոցիալ-քաղաքական էությունը, ցույց է տրված ինչպես այդ ընդհարումների, այնպես էլ կովկասյան մենշևիկների ու շենդրիկովյանների բացասական դերը Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժումների մեջ։ Հեղինակը մարքսիստական դիրքերից քննադատում է սպեցիֆիզմի պարագլուխներին, որոնք իր ժամանակին առաջ էին քաշել Կովկասում հայ բուրժուազիայի «ռևոլյուցիոն» լինելու սխալ տեսակետը։ Սակայն Ա. Կարինյանի աշխատության մեջ ոչ մի խոսք չի ասվում Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների մասին։

1920-ական թվականների հենց սկզբից մեծ ուշադրություն է դարձվել Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների հերոսական դրվագներից մեկի՝ Մայիսյան փառապանծ ապստամբության պատմության լուսաբանման գործին։

Մայիսյան ապստամբության պատմությունը շարադրելու առաջին լուրջ փորձը կատարել է Աշոտ Հովհաննիսյանը։ 1923 թ. հրատարակվում է նրա «Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը» աշխատությունը, որի մեջ համառոտակիորեն շարադրվում է Մայիսյան ապստամբության ընթացքը և տրվում այդ ապստամբության պարտության պատճառների պատմա-քննա-

---

42 «Նորք», № 5—6, 1925։

43 Տես Ա. Մնացականյան, Առաջին հայ բանվորական ռևոլյուցիոն կազմակերպությունը, «Պարտիական կյանք», № 10, 1956։ Վ. Ավետիսյան, «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիայի» մասին, «Լենինյան ուղիով», № 4, 1957։

կան վերլուծությունը։ Պատմական իրողություններին մոտենալով մարքսլենինյան մեթոդոլոգիայով, հեղինակը չի բավարարվել միայն ապստամբության պարտության պատճառների սոսկ թվարկումով, ապստամբության ղեկավարության գործում թույլ տրված սխալների մատնանշումով, այլև վեր է հանել այդ ապստամբության նշանակությունը Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների պատմության մեջ, ցույց տվել նրա դերը Հայաստանի աշխատավորության վերջնական հպիանակի գործում։

Չնայած որոշ անհաջող, ըստ էության ոչ ճիշտ ձևակերպումներին, ինչպես, օրինակ, դաշնակցությանը քաղքենիական պարտիա համարելը, նշված աշխատությունը սովետահայ պատմագրության աչքի ընկնող գործերից մեկն է, որը մինչև այսօր էլ չի կորցրել իր գիտական արժեքը։ Բնքը, հեղինակը ևս չի բացառել աշխատության մեջ առանձին սխալների առկայության հնարավորությունը։ «Ամեն մի լուսաբանություն արժեքավոր է տակավին որպես նախափորձ,—գրում է նա գրքի առաջաբանում,—սայթաքումներն անխուսափելի են, բայց և անհրաժեշտ։ Քանի որ այդ գնով է միայն հնարավոր մշակել կայուն տեսակետ մոտիկ անցյալի դալիք ուսումնասիրությունների համար»։

1926 թ. հրատարակվում է Մայիսյան ապստամբությանը նվիրված երկրորդ աշխատությունը, որը պատկանում է ապստամբության ղեկավար գործիչներից մեկի՝ Շ. Ամիրխանյանի գրչին[44]։ Չլինելով պրոֆեսիոնալ պատմաբան, հեղինակը սակայն, իր աշխատության առաջին գլխում հաջող կերպով լուսաբանել է Անդրկովկասի և Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո։ Հանգամանորեն շարադրելով Մայիսյան ապստամբության ընթացքը, հեղինակը աշխատել է ցույց տալ նաև ապստամբության պարտության պատճառները։ Գրքում բագահայտված են Արմենկոմի և Ռևկոմի թույլ տված սխալները Մայիսյան ապստամբության ղեկավարման գործում։ Աշխատության մեջ առանձին գլուխ է հատկացված ապստամբության մասին հրատարակված միակ գրքի՝ Ա. Հովհաննիսյանի գրքի քննադատությանը, փորձելով ցույց տալ նրա սխալը Մայիսյան ապստամբության գնահատման հարցում։ Հեղինակը խստորեն քննադատել է նաև Ս. Կասյանի տեսակետները, որոնք նա արտահայտել է «Նոր աշխարհ» ամսագրում հրատարակված հոդվածներում[45]։

Միանգամայն ճիշտ առաջ քաշելով Մայիսյան ապստամբության պարտության մի քանի սուբյեկտիվ պատճառներ, հեղինակը, սակայն, անտեսում է մի շարք օբյեկտիվ պատճառների առկայությունը։ Օրինակ՝ լեհական հարձակման և Ադրբեջանում հրահրված հակառևոլյուցիոն խռովության ջախջախման կապակցությամբ Կարմիր Բանակից անհրաժեշտ օգնություն չստանալը.

---

44 Շ. Ամիրխանյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920)։ Գնահատության փորձ, Մոսկվա, 1926։

45 Փորձելով բնութագրել Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի ծանր վիճակը, Ս. Կասյանը սխալվում է, գրելով, թե Հայաստանի գյուղացիությունը դերծ էր ռասակարգային խոր հակասությունից։ «Համարձակ կարող ենք ասել,—գրում է նա,—որ Հայաստանի գյուղացիության մեծագույն մասը —95 տոկոսը—կազմված է չունեվորներից։ Ուրեմն Հայաստանը ոչ միայն զուտ գյուղատնտեսական երկիր է, այլև մանր ու ապրատ գյուղացիական տնտեսությունների երկիր՝ գուրկ դասակարգային խոր անտագոնիզմից»։ Տես Ս. Կասյան, Հայաստանի տնտեսական-դասակարգային ստրուկտուրան, «Նոր աշխարհ», Թիֆլիս, 1922, 1, էջ 18։ Սխալներ կան նաև Ս. Կասյանի «Զախության հիվանդությունը մեզանում» հոդվածում։ Տես նույն տեղում, № 2, 1922։

արևմտյան տերությունների կողմից դաշնակներին ցույց տրված օգնությունը և այլն։

Քննադատելով Ա. Հովհաննիսյանին, Շ. Ամիրխանյանը իր հերթին թույլ է տալիս լուրջ սխալ։ Նա ժխտում է բանվորների՝ որպես հասարակության առաջավոր մասի վեկավար դերը և ընկնելով ծայրահեղության մեջ պնդում է, թե Հայաստանում ռևոլյուցիայի շարժիչ ուժը միայն գյուղացիությունն էր։ Ամիրխանյանը անհաջող, ըստ էության, սխալ է գնահատում դաշնակցության բնույթը։ Նրա կարծիքով դաշնակցությունը ազգային ինտելիգենցիայի պարտիա է եղել։ Ինչպես տեսնում ենք այստեղ ևս բացակայում է ճիշտ դասակարգային բնորոշումը։

Մայիսյան ապստամբության պատմությանը անդրադարձել է նաև Ա. Կարինյանը իր մի քանի աշխատություններում, իսկ ավելի հանգամանորեն՝ «Հայ ազգայնականների ուղին» գրքում,[46] ուր նա արդարացի կերպով քննադատում է այն սխալ կարծիքը, թե Հայաստանը լինելով հետամնաց գյուղատնտեսական, կիսանահապետական երկիր չէր կարող հող ունենալ ռևոլյուցիոն շարժման համար։ Սակայն հեղինակը մի կողմից գրում է, որ Մայիսյան ապստամբությունը մի քանի «չար» և «միակողմանի» կոմունիստների քմահաճույքների արդյունքը չէր, այլ ժողովրդական մի շարժում, մյուս կողմից՝ այն համարում է «տարբերային», «անակնկալ», «բնազդական մի ճիգ» և այլն։ Ապստամբության ղեկավարության թույլ կողմերը վեր հանելու փոխարեն հեղինակը ժխտում է ընդհանրապես ղեկավարության գոյությունը[47]։

1929 թ. հրատարակվեց մի ուրիշ հին բոլշևիկի՝ Թ. Մանդալյանի «Մայիսյան ապստամբությունը» գրքույկը, որի մեջ համառոտակիորեն շարադրված է ապստամբության ընթացքը և վերլուծված նրա պարտության պատճառները։ Հեղինակը սուր քննադատության է ենթարկում Արմենկոմի սխալ գիրքը Մայիսյան ապստամբությունը ղեկավարելու գործում։ Հեղինակը միաժամանակ քննադատում է Ա. Հովհաննիսյանի և Շ. Ամիրխանյանի գրքերում տեղ գտած սխալները և կատարում փաստական որոշ ճշտումներ։ Թ. Մանդալյանը քննադատում է նաև Ս. Կասյանին, որը անտեսում էր դաշնակների տիրապետության ժամանակ երկրի ներսում գոյություն ունեցող դասակարգային անտագոնիզմը և հետևաբար թերագնահատում դաշնակցության դեմ մղված պայքարի նշանակությունը։

1927 թվականից պարբերական մամուլում լայն բանավեճ է սկսվում Մայիսյան ապստամբության բնույթի և պարտության պատճառների հարցի լուսաբանման առթիվ։ Բանավեճը որոշ չափով շոշափում էր նաև դաշնակցության դասակարգային էության բնորոշման հարցը։ Ուշագրավ է, որ Մայիսյան ապստամբության գնահատման առաջին փորձը կատարել է Ա. Մյասնիկյանը։ 1921 թ. մայիսին Մայիսյան ապստամբության առաջին տարեդարձի առթիվ Երևանում տեղի ունեցած հանդիսավոր նիստում արտասանած իր ճառում նա ասել է. «Խորհրդային իշխանության սկիզբը անցյալ տարվա Մայիսյան ապստամբությունն է։ Դեռ այն ժամանակ կարող էինք ասել, որ Խորհրդա-

---

46 Ա. Կարինյան, Հայ ազգայնականների ուղին, Մոսկվա, 1926, էջ 89—102։
47 Նույն տեղում, էջ 91։

յին իշխանության հաղթանակը ապահովված է, քանի կա աշխատավորություն, որի վրա Խորհրդային իշխանությունը կարող էր հենվել երկու ոտքով...

Այսօր մենք ծունկ չոքենք Ալեքսանդրապոլի հերոսների առաջ, նրանք արին այն, ինչ որ պիտի աներին։ Դասեր պիտի առնենք Ալեքսանդրապոլի ապրստամբությունից։ Ամենակարևոր դասը դա այն պիտակցությունն է, որ Հայաստանի աշխատավորության համար չկա փրկություն առանց Խորհրդային իշխանության»[48]։

Այնուհետև այդ հարցը առաջ է քաշվել 1922 թվականին ՀԿ(բ)Պ առաջին համագումարում Կենտկոմի հաշվետվության առթիվ Ս. Լուկաշինի տված դեկուցման քննարկման ժամանակ։ Նշելով, որ Մայիսյան ապստամբությունը իրոք ժողովրդական-մասսայական ռևոլյուցիոն շարժում էր, համագումարը միաժամանակ բացահայտել է Արմենկոմի տակտիկական լուրջ սխալները, որոնք ապստամբության պարտության հիմնական պատճառներից մեկը հանդիսացան։

Բանավեճը սկսվում է Գ. Վանանդեցու «Մայիսյան ապստամբության գնահատման փորձերի առթիվ» հոդվածով, որը հրապարակվում է «Կոմունիստ» ամսագրի 1927 թ. 6-րդ համարում։ Այդ հոդվածում մատնանշվում են Ա. Հովհաննիսյանի և Շ. Ամիրխանյանի աշխատությունների սխալներն ու թերությունները։ «Կոմունիստ»-ի նույն տարվա հաջորդ համարներից մեկում՝ 9—10-րդ համարում հրապարակվում է Հ. Դուրգերյանի քննադատական հոդվածը Շ. Ամիրխանյանի գրքի մասին։ Այդ հոդվածը լի է սխալ մտքերով։ Հեղինակը գտնում է, որ Հայաստանում օբյեկտիվ պայմաններ չկային ապրստամբության համար։ Հ. Դուրգերյանին պատասխան հոդվածով հանդես է գալիս Շ. Ամիրխանյանը[49]։ Հ. Դուրգերյանին քննադատության է ենթարկում նաև Մայիսյան ապստամբության ակտիվ գործիչներից մեկը՝ Դր. Տեր-Սիմոնյանը[50]։ Սկսված բանավեճին մասնակցում են նաև Մ. Գարագաշը[51], Ա. Բերբերյանը[52] և ուրիշներ։

1929 թ. Թ. Մանդալյանի աշխատության հրապարակումով բանավեճը նորից բորբոքվում է։ Չհամաձայնվելով իր հասցեին Թ. Մանդալյանի արած քննադատության հետ, Շ. Ամիրխանյանը մամուլում հանդես է գալիս մի նոր հոդվածով[53]։ Ի պատասխան դրան հրապարակվում է Թ. Մանդալյանի հոդվածը[54], որի մեջ առաջ քաշված տեսակետներին մենք հիմնականում համաձայն ենք։ Հարկ է նշել, որ ներկա հոդվածի սահմանները մեզ հնարավորություն չեն տալիս հանգամանորեն վերլուծել Մայիսյան ապստամբության գնահատման հարցի շուրջը 1920-ական թվականների բանավեճի ժամանակ գոյու-

---

48 Տե՛ս «Կոմունիստ» (Երևան), № 82, 13 մայիսի 1921։

49 Շ. Ամիրխանյան, Մեչշանական դատողություններ Մայիսյան ապստամբության մասին, «Կոմունիստ», № 2, 1928։

50 Տե՛ս նույն տեղում, № 1, 1928։

51 Մ. Գարագաշ, 1920 թ. Մայիսյան ապստամբության և դաշնակցության սոցիալական էության գնահատման մի փորձ, նույն տեղում։

52 Ա. Բերբերյան, Պատասխան ընկ. Դուրգերյանին, «Լենինյան ուղի», № 1—2, 1928։

53 Շ. Ամիրխանյան, Մայիսյան ապստամբության դպրոցական բացատրությունը, «Նոր ուղի», № 9—10, 1929։

54 Թ. Մանդալյան, Բոլշևիկյան տակտիկա, թե՞ բաղնազարություն, նույն տեղում։

թյուն ունեցած տարբեր տեսակետները։ Այդ մի առանձին ուսումնասիրության նյութ է, որին կանդրադառնանք հետագայում։

Թեպետև Հայաստանում սովետական կարգերի հաստատման պատմությանը նվիրված առանձին աշխատություններ հրատարակվեցին միայն 1930-ական թվականներից սկսած (Վ. Պարսամյան, Մ. Ներսիսյան և ուրիշներ), սակայն որոշ աշխատանք կատարվեց այդ ուղղությամբ նաև 1920-ական թվականներին։ Առաջին քայլը կատարեց Աշոտ Հովհաննիսյանը։ 1926 թ. հրատարակվեց նրա «Համազգային կրիզիսը» գրքույկը, որի մեջ հեղինակը կանգ է առնում Հայաստանում սովետական կարգերի հաստատման պատմության մի քանի կարևոր հարցերի վրա։

Հակառակ դաշնակ գրչակների ստահոդ պնդումների, հեղինակը, հենվելով ռևոլյուցիոն ճգնաժամի մասին լենինյան հայտնի դրույթի վրա, փաստական նյութերով ցույց է տալիս, որ 1920 թ. նոյեմբերին ներքին և արտաքին մի շարք հանգամանքների շնորհիվ Հայաստանում ստեղծվել էր ռևոլյուցիոն իրադրություն, որ Հայաստանի բանվորների և գյուղացիների ռևոլյուցիոն պայքարը հասել էր իր բարձրագույն կետին, որի անխուսափելի հետևանքը հանդիսացավ դաշնակների արյունոտ ռեժիմի տապալումը։ Աշխատության մեջ մերկացվում է դաշնակների հակաժողովրդական, հակառևոլյուցիոն քաղաքականությունը, բացահայտվում է 1920 թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում դաշնակների և քեմալականների միջև կնքված խայտառակ և ստոր հրին պայմանագրի հակասովետական բնույթը։

1920-ական թվականներին մի շարք աշխատություններ են հրատարակվել, որոնց մեջ մերկացվել է դաշնակների հակառևոլյուցիոն գործունեությունը։ Այդ աշխատությունները, որոնք ունեն ինչպես գիտահետազոտական, այնպես էլ հրապարակախոսական բնույթ, ժամանակին մեծ դեր են խաղացել դաշնակցությունն և հայ բուրժուա-նացիոնալիստական մյուս պարտիաների ու հոսանքների դեմ մեր պարտիայի մղած գաղափարական պայքարում։ Այդ աշխատություններում սուր քննադատության են ենթարկված ոչ միայն դաշնակների գործունեությունը, այլև դաշնակ-գրչակների «պատմական հետազոտությունները», որոնց հեղինակները ոչ մի ջանք չեն խնայել կեղծելու պատմությունը, ծուռ հայելու մեջ ցույց տալու ռեալ իրականությունը։

Այդ տեսակետից ուշադրության արժանի են Ալ. Մյասնիկյանի մի շարք աշխատությունները։ «Դաշնակցության կառավարության դոկումենտներից» (Երևան, 1922) ժողովածուի առաջաբանում Ալ. Մյասնիկյանը փաստական նյութերի հիման վրա վեր է հանում դաշնակ գործիչների հակաժողովրդական քաղաքականությունը։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո արտասահմանում գտնվող դաշնակցության և հայ բուրժուա-նացիոնալիստական մյուս պարտիաների գործունեությունը հաջող կերպով մերկացված է Ալ. Մյասնիկյանի «Կուսակցություններ գաղութաթայության մեջ» գրքում (Թիֆլիս, 1924)։ Հեղինակը, թեև իր առջև խնդիր չի դրել պատմագիտական աշխատություն գրելու, սակայն այդ աշխատության մեջ տրված է հայ քաղաքական պարտիաների բնութագրությունը՝ իրենց պատմական զարգացման մեջ։ Անդրադառնալով դաշնակցության անցյալ գործունեությունն ուսումնասիրելու անհրաժեշտության հարցին, Ալ. Մյասնիկյանը գրում է. «Անհասարակ պետք է, որ մենք յրջորեն և հանգամանորեն կանգ առնենք դաշնակցության վրա, նրա ծագման,

պարգացման էպոխաների վրա. չէ՞ որ դաշնակցությունը մի ամբողջ պատմություն է, շրջան է և նույնիսկ վերապրում է հայ կյանքում»։ (էջ 9)։ Վերոհիշյալ աշխատության մեջ հաջող կերպով մերկացվում է հայկական հարցի լուծման ուղղությամբ հայ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների դիրքը, ինչպես և վերջիններիս կողմից կուռք դարձված եվրոպական դիվանագիտությունը։ Դաշնակցության անցյալ և ներկա գործունեությանը Մյասնիկյանն անդրադարձել է նաև իր բազմաթիվ հոդվածներում և այլ գրքերում։

1920-ական թվականներին դաշնակցության մասին մի շարք աշխատություններ է գրել Ա. Հովհաննիսյանը։ 1923 թ. հրատարակվում է նրա «Դաշնակցության իդեոլոգիայի բնաբանիկ կուրս» հոդվածը («Նորք», դիրք երրորդ, 1923), որի մեջ հեղինակը մերկացնում է դաշնակցության իդեոլոգիայի դեպի ֆաշիզմը կատարած էվոլյուցիան։ Դաշնակցության և իմպերիալիզմի գաղափարական կապերը Ա. Հովհաննիսյանը մերկացրել է «Դաշնակցությունը և պատերազմը» գրքում (Երևան, 1924)։ «Պատերազմից առաջ, թե պատերազմից հետո,—գրում է հեղինակը,—դաշնակցությունը կանգնած է եղել միշտ ռազմապաշտ բուրժուազիայի ազգային-քաղաքական տեսակետի վրա» (էջ 4)։

1927 թ. «Նորք»-ում (դիրք առաջին) հրապարակվում է Ա. Հովհաննիսյանի «Դաշնակցության սոցիալական ծագումը» աշխատությունը, որի մեջ հեղինակը փորձում է ցույց տալ դաշնակցության հանդես գալու սոցիալ-պատմական նախադրյալները, վեր հանել նրա հասարակական-քաղաքական էվոլյուցիան։ Առաջադրված նպատակին հասնելու համար հեղինակը հանգամանորեն վերլուծում է Անդրկովկասի սոցիալ-տնտեսական կյանքը 19-րդ դարի երկրորդ կեսում և տալիս ժամանակի հայ հասարակական-քաղաքական շարժումների բնութագիրը։ Ա. Հովհաննիսյանը, ինչպես իր նախորդ աշխատություններում, այստեղ ևս դաշնակցությունը համարում է մանրբուրժուական պարտիա, թեև պետք է ասել, որ նա այդ պարտիան չի դիտում քարացած վիճակում, ընդունում է նրա էվոլյուցիան, նրա վերասերումը։ Հեղինակը դաշնակցությանը բնութագրում է որպես հայ բուրժուազիայի գործիքի, բուրժուական արևմուտքի և ռուսական ցարիզմի կամակատարի, որպես վերջիններիս քաղաքական շահերի ջերմ պաշտպանի։

Դաշնակցության սոցիալական ծագման մասին Ա. Հովհաննիսյանի հայտնած կարծիքը, որը մինչ այդ քննադատվել էր Ռ. Մանդալյանի և ուրիշների կողմից, նոր առարկությունների հանդիպեց։ Ի պատասխան դրա 1929 թ. Ա. Հովհաննիսյանը հրապարակեց «Դաշնակցության առթիվ» բրոշյուրը, որի մեջ նա կրկին անգամ պնդում է իր նախկին տեսակետը, այն մասին, որ դաշնակցությունը իր սկզբնավորման շրջանում մանր բուրժուական պարտիա է եղել, բայց 1905 թվականից սկսում է նրա վերասերման պրոցեսը։

Հարկ է նշել, որ պարտիական շատ փաստաթղթերում, հատկապես ՀԿՊ Կենտկոմի 4-րդ և 5-րդ պլենումների և 6-րդ համագումարի որոշումներում (1929 թ.) պարզ ու հստակ տրված է դաշնակցության դասակարգային բնութագիրը։ Այնտեղ ասված է, որ դաշնակցությունը եղել է, ու մնում է որպես հայ բուրժուազիայի ռազմատենչ պարտիա։

---

5. Տես Գ. Վանանդեցի, Դաշնակցության մանրբուրժուականության տեսության քաղաքական հետևանքները, «Խ. Հ.», № 94, 114, 1928։ Ռ. Քալաշյան, Իդեոլոգիական պայքարի խնդիրները, «Լենինյան ուղի», № 1, 2—3, 1928։ Ե. Հրանտի գրախոսություններ, «Նոր ուղի», № 6, 1929։

Ուշադրության արժանի են Ա. Կարինյանի պատմա-հրապարակախոսական բնույթ ունեցող մի շարք աշխատությունները, որոնց մեջ անողոք քննադատության է ենթարկված դաշնակցականների և հայ մյուս բուրժուական նացիոնալիստների հակառևոլյուցիոն գործունեությունը։ Ա. Կարինյանի այդ աշխատությունները կարևոր են նաև մոտիկ անցյալի հայ հասարակական-բաղաքական կյանքի բազմաթիվ կնճռոտ հարցեր լուսաբանելու համար։

«Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը» գրքում (Երևան, 1924) Ա. Կարինյանը, հենվելով լենինյան դրույթների վրա, ցույց է տալիս, որ 1914 թ. պատերազմը մղվում էր իմպերիալիստական պետությունների շահերի համար և միաժամանակ մերկացնում կովկասահայ բուրժուազիայի և նրա մարտական պարտիայի՝ դաշնակցության այդ պատերազմում խաղացած դերը, որը աղետաբեր հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի համար։ Հեղինակը գրանում է, որ դաշնակցությունը իր գործունեությամբ ծառայել է կովկասահայ բուրժուազիայի, ռուսական ցարիզմի և միջազգային իմպերիալիզմի շահերին։ Համաշխարհային առաջին պատերազմի ժամանակ ցարիզմի թելադրանքով և օգնությամբ դաշնակների կազմակերպած հայ կամավորական շարժումը, հեղինակի կարծիքով, դրա լավագույն ապացույցն է։ Հեղինակը փաստերով ապացուցում է, որ արևմտահայերը դեմ էին այս շարժման, բայց դաշնակցության ղեկավարությունը լսել չէր ուզում այդ մասին, շարունակելով իր հին ուղին։

Իմպերիալիստական տերությունների վրա հույս դրած դաշնակների կառավարությանը մեղադրելով 1920 թ. աշնանը հայ-թուրքական պատերազմը հրահրելու մեջ, հեղինակը բացահայտում է նաև Սովետական Ռուսաստանի խաղաղասիրական առաջարկները համառորեն մերժելու և 1920 թ. դեկտեմբերի 2-ին Թուրքիայի հետ ապօրինի պայմանագիր կնքելու քաղաքական դրդապատճառները։ Աշխատությանը կցված են մի շարք կարևոր փաստաթղթեր, որոնք լույս են սփռում հեղինակի կողմից քննարկված հարցի վրա։

Ա. Կարինյանի վերոհիշյալ աշխատությունը, ինչպես որ պետք էր սպասել, քննադատության է ենթարկվում արտասահմանյան դաշնակցական մամուլում։ Դաշնակցական «պատմագիր» Ս. Վրացյանը «Հայրենիքի» էջերում հանդես գալով դաշնակցության գործունեության արդարացումով, առանց որևէ իրական փաստի «ժխտում է» Ա. Կարինյանի գրքում առաջ քաշված մեղադրանքները դաշնակցության հասցեին։ Ի պատասխան դաշնակների վայրահաջության, 1926 թ. հրատարակվում է Ա. Կարինյանի երկրորդ աշխատությունը[56], որի մեջ հեղինակը արժանի հակահարված է տալիս դաշնակ պարագլխին։ Իր աշխատության առանձին գլխում հեղինակը բացահայտում է դաշնակների կառավարության դիտավորությունը Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչ Լեգրանի հետ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում պայմանագիր կնքելիս։ Աշխատության վերջին բաժինը նվիրված է Մերձավոր Արևելքի ժողովուրդների ազատագրական շարժման մեջ դաշնակցության՝ որպես միջազգային իմպերիալիզմի գործակալի խաղացած ստոր դերի մերկացմանը։ Աշխատությանը կցված են 14 կարևոր վավերագրեր, որոնց մեծ մասը վերաբերվում է 1920 թ. հայ-թուրքական պատերազմին և սովետա-հայկական բանակցություններին։

---

56 Ա. Կարինյան, Դաշնակցությունը փաստերի դեմ, Թիֆլիս, 1926։

Պատմագիտական որոշակի արժեք է ներկայացնում Ա. Կարինյանի «Հայ ազգայնականների ուղին» աշխատությունը[57], որը փաստորեն ժողովածու է պարբերական մամուլում հրապարակված հեղինակի աշխատությունների և հոդվածների, որոնք գլխավորապես ուղղված են հայկական նացիոնալիզմի դեմ։

Հայկական նացիոնալիզմի դեմ է ուղղված Ա. Կարինյանի «Նացիոնալիզմի նոր դիրքեր» (Մոսկվա, 1929) գիրքը, որի մեջ հեղինակը վերլուծում է սոցիալ-քաղաքական այն պատճառները, որոնք ծնել են հայկական սմենովեխականությունը, բացահայտում այդ նոր դաղափարախոսության իսկական էությունը։

Սակայն Ա. Կարինյանը իր աշխատություններում ճիշտ բնութագրելով դաշնակցության որպես հայ բուրժուա-նացիոնալիստական պարտիայի ավանտյուրիստական գործունեությունը, փաստորեն անտեսում է Թուրքիայի նվաճողական քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ։ Պետք է ասել, որ նման մոտեցումը իշխող է եղել 1920-ական թվականներին սովետահայ պատմագրության մեջ։ Այդ թերևս պետք է բացատրել մի կողմից դաշնակցության դեմ մղվող սուր պայքարի հրատապ անհրաժեշտությամբ, իսկ մյուս կողմից՝ այն քաղաքական իրադրությամբ, որ առաջացել էր այդ տարիներին Թուրքիայում։

Դաշնակցության անցյալ գործունեությունը մերկացնող մի շարք արժեքավոր աշխատություններ ունի Հ. Ազատյանը[58]։ Դաշնակցության դասակարգային էության բնութագրմանը նվիրված հոդվածաշարքում հեղինակը գտնում է, որ դաշնակցությունը եղել է ոչ թե մանրբուրժուական, այլ խոշորբուրժուական պարտիա։ Իր տեսակետը հիմնավորելու համար հեղինակը հանդամանորեն կանգ է առնում Հայաստանի վերջին երկդարյա սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի վրա, փորձում է բնութագրել հայ հասարակական-քաղաքական շարժումների էությունը։

Հ. Ազատյանի աշխատության մեջ բացահայտված է դաշնակցության որպես բուրժուական արևմուտքի և ռուսական ցարիզմի գործակալի ողջ էությունը։ Հեղինակի դրչի տակ անխնա քննադատության է ենթարկված բուրժուական Եվրոպայի գեվանագիտությունը, հայկական հարցի նկատմամբ նրա բռնած դիրքը։ Սակայն Հ. Ազատյանի նշված աշխատության մեջ կան իր ժամանակի համար բնորոշ մի շարք սխալներ։ Այսպես. օրինակ, նա միանգամայն ճիշտ քննադատելով հայկական հարցի լուծման բուրժուա-նացիոնալիստական ուղին, ճիշտ գնահատական չի տալիս հայերի ազգային-ազատագրական շարժումներին և այդ շարժման առանձին գործիչներին։ Չի կարելի համաձայնվել հեղինակի այն պնդման հետ, թե «Դաշնակցության կազմակերպումով վերջնականապես ձևակերպվում, բոլորվում ու ավարտվում է այն շարժումը, որին սկիզբ է դրվում 17-րդ դարի վերջում կամ ամենաուշը՝ 18-րդ դարի 20-ական թվականներին»[59]։

Դաշնակների 1920—1921 թվականների ավանտյուրիստական գործունեու-

57 Ա. Կարինյան, Հայ ազգայնականների ուղին, Մոսկվա, 1926։

58 Հ. Ազատյան, Դաշնակցության հակահեղափոխական գործունեությունը 1903—1908 թթ. ժամանակաշրջանում, «Լենինյան ուղի», № 1—2, 3—4, 1928։ Դաշնակցության դասակարգային բնույթը, «Նոր ուղի», № 1—12, 1929։

59 «Նոր ուղի», № 1, էջ 196։

թյունը հաջող կերպով մերկացված է Գ. Զուրարյանի «Դաշնակցության տանկական օրիենտացիան և հայրենիքի փրկության կոմիտեն» գրքում։ Հեղինակը փաստական նյութերի հիման վրա ցույց է տվել, թե միջազգային-քաղաքական ինչ պայմաններում ծնունդ առավ, ձևավորվեց և ընթացք ու վախճան ստացավ դաշնակցության տանկական օրիենտացիան։ Հեղինակը բացահայտում է 1920 թ. հայ-թուրքական պատերազմի սանձազերծման գործում դաշնակցության խաղացած դերը, նրա՝ ի վնաս Հայաստանի շահերի ունեցած հակասովետական դիրքը, 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրի էությունը և վերջապես ցույց տալիս «Հայրենիքի փրկության կոմիտեի» դեպի քեմալական Թուրքիան կատարած կողմնորոշման սոցիալ-քաղաքական դրդապատճառները։ Գ. Զուրարյանի աշխատությունը ունի թե պատմագիտական և թե՛ հրապարակախոսական բնույթ։

1929 թ. հրատարակվում է Գ. Արովի «Դաշնակցությունն անցյալում և այժմ» գիրքը, որը դաշնակցության ամբողջ գործունեության պարզ ու հանրամատչելի քննադատական մի շարադրանք է։ Դաշնակցության գործունեության առանձին կողմերը մերկացնող արժեքավոր հոդվածներով պարբերական մամուլում հանդես են եկել Ա. Մռավյանը, Պ. Մակինցյանը, Զ. Աշրաֆյանը, Ա. Երզնկյանը, Հ. Եկավյանը, Հ. Գարրիելյանը, Ե. Զուրարը և ուրիշներ։

Դաշնակների հրահրած 1921 թ. քաղաքացիական կռիվների պատմությունը, ավելի ճիշտը ռազմական գործողությունների վերլուծությունը հաջող կերպով տվել է քաղաքացիական կռիվների ղեկավար գործիչներից մեկը՝ երրորդ հայկական գնդի հրամանատար Ա. Բաղդասարյանը[60]։

1920-ական թվականներին հայ մարքսիստների ուշադրությունից չի վրիպել նաև մյուս պարտիաների և քաղաքական կազմակերպությունների գործունեությունը։ 1922 թ. հրատարակվում է Ա. Մռավյանի «Սոցիալիստ հեղափոխականներն Անդրկովկասում» բրոշյուրը, որի մեջ փաստերով մերկացվում է էսեռների գործունեությունը ինչպես Հոկտեմբերյան ռևոլյուցիայից առաջ, այնպես էլ դրանից հետո, հատկապես Բաքվում։

Սպեցիֆիկների՝ այսպես կոչված հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության պատմագենետիկական վերլուծությունը տվել է Ս. Կասյանը իր «Սպեցիֆիկներ և սպեցիֆիզմ» աշխատության մեջ (Թիֆլիս, 1928)։ Ճիշտ բնութագրելով սպեցիֆիկների կազմակերպության էությունը, վերհանելով նրա հատկապես կազմակերպական հարցերում ունեցած սխալ դիրքը, հեղինակը, սակայն, կրակի տակ է առնում նաև որոշ ժամանակ սպեցիֆիզմին հարած, բայց վաղուց դրանից հրաժարված կոմունիստական պարտիայի այնպիսի անձնվեր գործիչներին, ինչպիսիք են՝ Ա. Մյասնիկյանը, Ա. Հովհաննիսյանը, Ա. Կարինյանը, Հ. Հովսեփյանը և ուրիշներ։ Զափազանցնելով նրանց կողմից թույլ տրված առանձին սխալները, կառչելով նրանց արտահայտած մի քանի անհաջող մտքերին, հեղինակը սուբյեկտիվ, ըստ էության անհիմն դատապարտման է ենթարկում նրանց։

1920-ական թվականներին որոշ աշխատանք է կատարվել նաև Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուսումնասիրության ուղղությամբ։ Առաջին փորձը կատարել է Հայաստանի կոմունիստական պարտիայի

---

60 Ա. Բ ա ղ դ ա ս ա ր յ ա ն, Քաղաքացիական պատերազմը Հայաստանում, Երևան, 1928։ Երկրորդ հրատարակություն, Երևան, 1931։

հնագույն գործիչ Ա. Մռավյանը։ 1928 թ. լույս տեսավ նրա «Ե՞րբ և ինչպե՞ս է հիմնադրվել Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը» գրքույկը, որի մեջ հեղինակը տալիս է Հայաստանի կոմունիստական պարտիայի հիմնադրման համառոտ պատմությունը, հերքելով այն տեսակետը, որով Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը նույնացվում էր արևմտահայ աշխատավորության մեջ գործելու նպատակով ստեղծված Հայաստանի կոմունիստական կուսակցության հետ[61]։ Այդ տարիներին լույս տեսան նաև մի շարք բրոշյուրներ և արժեքավոր հոդվածներ, նվիրված հայ ականավոր ռևոլյուցիոն գործիչների կյանքին ու գործունեությանը[62]։ Պետք է նկատել, որ նրանցից մի քանիսի մեջ կան որոշ սխալներ, ոչ ճիշտ ձևակերպումներ։ Որոշ աշխատանք է կատարվել նաև Հայաստանի կոմերիտմիության պատմության ուսումնասիրման ուղղությամբ[63]։

1920-ական թվականներին հրատարակվել են արխիվային փաստաթղթերի մի քանի արժեքավոր ժողովածուներ[64]։

Ամփոփենք։ 1920-ական թվականների սովետահայ պատմագրությունը մեծ դեր խաղաց սովետահայ պատմական մտքի զարգացման մեջ։ Այդ տարիներին ծավալված դաղափարական պայքարում հայ մարքսիստական պատմագիտությունը իր հաստատուն տեղը գրավեց և զգալի նվաճումներ ձեռք բերեց կղերա-ֆեոդալական և բուրժուական պատմագրության կոնցեպցիաների ջախջախման գործում։ Հատկապես մեծ աշխատանք կատարվեց դաշնակցության հակաժողովրդական գործունեության և բուրժուա-ազգայնական դաղափարախոսության մերկացման ուղղությամբ։ Դրա հետ միասին մոտիկ անցյալի ռևոլյուցիոն շարժումների, հատկապես Մայիսյան հերոսական ապստամբության պատմության վեր հանումը դարձավ սովետահայ պատմագրության առաջնահերթ խնդիրներից մեկը։

Հաջորդ տասնամյակում՝ 1930-ական թվականներին և նրանից հետո հրատարակվեցին ինչպես հայադետ-պատմաբանների ավագ սերնդի ներկայացուցիչների, այնպես էլ նոր, սովետական շրջանում աճած պատմաբանների բազմաթիվ աշխատություններ, որոնց մի մասը գրվել և տպագրության է պատրաստվել 1920-ական թվականներին։

---

61 Հայաստանի Կոմունիստական պարտիայի ձևավորման մասին վերջերս մամուլում առաջ բաշված կարծիքներին չենք անդրադառնում։

62 Ա. Կարինյան, Ստ. Շահումյան, Մոսկվա, 1925։ Ա. Կարինյան, Դ. Սիմոնյան, Ալ. Մարտունի-Մյասնիկյան, Երևան, 1925։ Ս. Մելիքսետ-Տեր-Պետրոսյան, Հեղափոխության հերոսը (ընկ. Կամո), Երևան, 1926։ Ս. Խանոյան, Սուրեն Սպանդարյան, Երևան, 1927. Նույնի Մելիք Մելիքյան (Դեղուշկա), Երևան, 1928։ Սիմակ, Ասքանազ Մռավյան, Երևան, 1928։

63 Հ. Գարրիլյան, Երիտասարդական շարժումը Հայաստանում, Լենինական, 1924։ Հ. Դանիելյան, Սպարտակը Հայաստանում, Երևան, 1928, երկրորդ հրատ., Մոսկվա, 1931։

64 Դաշնակցության կառավարության դոկումենտներից։ Ա. Մյասնիկյանի առաջարանով, Երևան, 1922։ Ղամարլուի և Զանգեզուրի կոմիտեները։ Նյութեր հավաքեց Վ. Տամբուշի, Երևան, 1922։ «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտը, Ա. Հովհաննիսյանի առաջարանով, Երևան, 1926։ Армянский вопрос на Лозанской конференции, с предисловием П. Макинцяна, Тифлис, 1926. Մի շարք կարևոր փաստաթղթեր են հրատարակել նաև առանձին գրքերում ու գիտական ամսագրերում Ա. Հովհաննիսյանը, Ա. Կարինյանը, Լևոն, Ն. Մելիք-Յոլչյանը և ուրիշներ։